

Մ. Ա. Ն. Ի. Կ. Մ. Կ. Ր. Տ. Չ. Յ. Ն.

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒՉԵԽՅԻ

ԵՐԵՎԱՆ 1971



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЬЯНА

МАНИК МКРТЧЯН

ՏԱՐԷՆՏ ԱՆՈՒՇԵԽԻՈՒ

(исследование и тексты)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Е Р Е В Ա Ն — 1 9 7 1


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ

ՄԱՐԳԻՍ ԱՊՈՒԶԵԼՅԻ

(Ուսումնասիրություն և բնագրեր)

46522
A



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 7 1

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

XVIII դարի հայ բանաստեղծ Ապուլեիսցու ստեղծագործությունը ցարդ հայտնի չէ ընթերցողին: Առաջին անգամն է ուշադրության արժանացվում նրա բանաստեղծական ժառանգությունը, ներկայացված են Ապուլեիսցու տալերի մեղ հայտնի բնագրերը:

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Փ

Տաղասաց Սարգիս Ապուշեխցին քողել է ուշագրավ բանաստեղծությունների մի շարք: Ճիշտ է, մեծ չէ Ապուշեխցու գրական ժառանգությունը (ընդամենը 18 տաղ), սակայն նրա ստեղծագործությունն իր ինքնուրույնությամբ և գեղարվեստական արժեքով ինչ-որ չափով լրացնում է մեր միջնադարի հարուստ գրականությունը: Բանասիրության մեջ, սակայն, ոչ մի հիշատակություն չկա Ապուշեխցու անձնավորության ու ստեղծագործության վերաբերյալ, էլ չենք խոսում նրան նվիրված ուսումնասիրության կամ գեթ մի հոդվածի մասին:

Հայտնի է, որ դեռևս անցյալ դարի բառասունական քվականներից սկսած պարբերական մամուլում, մասնավորապես «Բազմավես» ամսագրում, հրատարակվել են միջնադարի հայ տաղերգուների բազմաթիվ գործեր, ինչպես նաև «Ոսմկական» կամ Ժողովրդական շատ երգեր: Ապուշեխցու տաղերից և ոչ մեկը չի տպագրվել որևէ հանդեսում կամ քերթում: Գուցե դրա պատճառն այն է, որ նրա տաղերը տարածում չեն գտել ձեռագրերում. առայժմ մեզ հայտնի է մեկ ձեռագիր, ուր ամփոփված են նրա տաղերը:

Ներկա աշխատության նպատակն է հրապարակ
հանել Սարգիս Ապուշեխցու տաղերը, ցույց տալ նրա
ստեղծագործության գրական-գեղարվեստական ու
պատմական արժեքը, ինչպես նաև դրանց առնչություն-
ները միջնադարի առանձին բանաստեղծների ստեղծա-
գործությունների հետ և, միաժամանակ, որոշել այդ
անձանոք երգչի տեղն ու դերը ուշ միջնադարի մեր
բանաստեղծության պատմության մեջ:

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒԶԵՆՑԻՆ ԵՎ ԻՐ ՏԱՂԵՐԸ

Սարգիս Ապուշեխցին ուշ միջնադարի հայ մշակույթի ու գրականության այն գեմքերից է, որոնց անձնավորության մասին, ինչպես ասվեց, հայտնի չէ ոչ մի տեղեկություն: Միակ աղբյուրը, որն աղբատիկ, բայց եղակի վկայություններ է ընձեռում, Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 4426 ձեռագիր տաղարանն է՝ ընդօրինակված 1765 թվականին Հայրապետ Ագուլեցի գրչի կողմից: Այս ձեռագրում, ուր հիմնականում ամփոփված են Նաղաշ Հովնաթանի և Հակոբ Նաղաշի ստեղծագործությունները, ի թիվս այլ տաղերգուների գործերի, տեղ են գտել նաև Սարգիս Ապուշեխցու տաղերը: Տաղերի խորագրերում, բարեբախտաբար, հիշատակված է հեղինակի՝ Սարգիս Ապուշեխցու անունը: Օրինակ՝ «Հրով սիրոյդ, ով իմ ազնիւ» սկզբնատողով տաղը խորագրված է. «Տաղ Ակընցի գուղէն Ապուշեղցի տիրացու Սարգիսէ դարթարեալ վասն սիրոյ»¹: Այս խորագրի «Ակընցի գուղէն Ապուշեղցի տիրացու Սարգիս» արտահայտությունը, չնչին բացառությամբ և աննշան տարբերություններով, գրեթե ընդհանուր է Ապուշեխցու մյուս բոլոր տաղերի խորագրերի համար: Ակներև է, ուրեմն, որ Սարգիսն Ակնցի է, Ապուշեխցի և եղև է տիրացու կամ դպիր:

¹ Մատենադարան, ձեռ. № 4426, էջ 94Ի: Տե՛ս նաև այս գրքի և տաղի խորագիրը, էջ 459:

ևսորագրերի այս տեղեկություններից բացի, Ապու-
լեխացու մի շարք տաղերի տնագլուխ տառերը հոգում են
«Սարգիս», «Ի Սարգսէ» և այլն, որոնք նույնպես հա-
վաստի են դարձնում այդ տաղերի հեղինակային
պատկանելությունը:

Սրանք են, ահա, Սարգիս Ապուլեխացու մասին մեր
ունեցած ուղղակի և սուղ տեղեկությունները:

Ապուլեխացու ապրած ժամանակը որոշելու համար
միակ աղբյուրը դարձյալ Մատենադարանի № 4426
ձեռագրի տարեթիվն է՝ 1765 թվականը:

Ցավով պետք է նշել, որ ձեռագրացուցակներում
կամ այլուր ուրիշ տեղեկություններ չկան Սարգիս
Ապուլեխացու անձնավորության վերաբերյալ: Միակ
բացառությունը Մատենադարանի Ձեռագրացուցակի Ա
հատորի 1605 էջում № 4426 ձեռագրի առիթով տրված
տեղեկությունն է. «Սարգիս Ակնեցի, Ժէ—ԺԸ դար»:
Ուրիշ ոչինչ: Ասենք, որ Ակնեցին նույն ինքն Ապուլեխ-
ցին է:

Հարյուրավոր Սարգիսներ կան հիշատակված Հ.
Աճառյանի «Հայոց անձնանոսներին բառարանի» Դ
հատորում: Սակայն Ապուլեխացու մասին չկա հիշատա-
կություն: Միակ հիշատակությունը, որ թերևս կարող
է առնչվել Սարգիս Ապուլեխացու հետ, հետևյալն է.
«Սարգիս հրեց, տաղասաց Ժէ դարի»¹: Աղբյուրը՝ Ղ.
Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», Բ, Վենետիկ,
1870, էջ 126: Ալիշանն իսկապես XVII դարի մեր տա-
ղերգուների (Սուքիաս Ստեփանոս Թոխաթցի, Երեմիա
Չելեպի Քյոմուրճյան, Ստեփանոս Շատախցի և այլք)
շարքում հիշատակում է մի տաղերգու ևս՝ Սարգիս հ-

¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, Երևան,
1948, էջ 457:

րեց¹։ Դժվար է սակայն ասել, թե խոսքն այստեղ Ապուլչեխցու մասին է։ Նրանց հուլյնացնելու ոչ մի հիմք չկա։ Աճառյանը հիշատակում է նաև Սարգիս վարդապետ Թիֆլիզեցի «տաղասաց ժ՛՛՛՛ղ դարու»։ Պարզ է, որ սա ևս կապ չունի Ապուլչեխցու հետ։ Աճառյանը նույն հասարկում հիշատակել է և մի ուրիշ Սարգիս. «Սարգիս տաղասաց՝ ժէ դ., իր տաղերից մի նմուշ տես Ձեռ. Հալեպի, Բ, էջ 63 բ»²։

Նայում ենք Արտ. Սյուրմեյանի Հալեպի ձեռագրացուցակը, որը հղում է Աճառյանը։ Վկայակոչված ձեռագիրը հավաքածու է, թվահամարը՝ 15, ժամանակը՝ 1721 թ. հետո։ Ձեռագրի 131 էջի առանց խորագրի մի բանաստեղծությունից, որը նվիրված է աստվածամորը. բերված է հետևյալը.

Ի խոր խոցեալ աղաղակմ,
 Եւ ի սրտէ յոյժ հառաչմ,
 Առ ոտս քո անկեալ դիմեմ...
 ...է իսկուհի, մայր պարծանաց,
 Զմեղուցեալս հան ի վշտաց,
 Անաղկ Սարգիսս, որ զբանս երգեաց,
 Օրհնաբանէ զքեզ, սուրբ կոյս,
 Սուրբ, ասպաէն և յոյս³։

Այսքանը միայն։ Այս նմուշը մասամբ հիշեցնում է Ապուլչեխցուն՝ նույն նյութին նվիրված մեկ տաղը (ԺԲ)։ Ո՞վ է տաղի հեղինակ Սարգիսը։ Գուցե Ապուլչեխցին։ Սակայն, եթե ընդունենք, որ այդ տաղի հեղինակը ևս Սարգիս Ապուլչեխցին է, ապա դարձյալ ոչ մի նոր տեղեկություն չէինք ունենա, թերևս միայն

¹ Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ, Վենետիկ, 1921, էջ 113։

² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 458։

³ Արտ. Սյուրմեյան, Մայր ցուցակ ձեռագրաց Հալեպի և Անթիլիասի և մասնավորաց, Բ, Հալեպ, 1936, էջ 63բ։

այն, որ այդ տաղը նույնպես հայտնի է XVIII դարի գրչությամբ 1721 թվականից հետո գրված ձեռագրում:

Ելնելով Ապուլեխցու տաղերի լեզվից, ոճից ու բովանդակությունից, ինչպես նաև մեզ հայտնի միակ ձեռագրի ժամանակից՝ 1765 թվականից, կարող ենք ասել, որ Սարգիս Ապուլեխցին սպրել ու ստեղծագործել է XVII դ. վերջերին և XVIII դ. առաջին կեսին: Հավանաբար նա հաջորդել է Նաղաշ Հովնաթանին, ժամանակակից է եղել Բաղդասար Դպրին, Պետրոս Ղափանցուն և Նախորդել է Գրիգոր Օշականցուն ու Հովհաննես Կարնեցուն: Սարգիս Ապուլեխցու տաղերն իրենց ձևով ու բովանդակությամբ որոշակիորեն հիշեցնում են վերոհիշյալ տաղերգուների ստեղծագործությունները և առհասարակ XVII—XVIII դարերի տաղերգությունը՝ հիմնական գծերով, ավելացնենք, սակայն, որ Ապուլեխցին մեծապես կրել է Բաղդասար Դպրի ազդեցությունը:

* * *

Սարգիս Ապուլեխցին ծնվել է Ակն քաղաքի Ապուլեխ արվարձանում: Այսպես ենք կարծում, ելնելով նրա տաղերի խորագրերում հիշված «Ակնցի գուղէն Ապուլեղցի» արտահայտությունից: Դա է հուշում և բանաստեղծի Ապուլեխցի մականունը:

Ապուլեխը եղել է Ակնա գյուղերից ամենամեծը, ընկած քաղաքի հարավային մասում, Արեգի թաղի և Ապուլեխի բարձրաբերձ լեռների միջև, բլրի վրա: Բնակիչները եղել են մեծ մասամբ Վասպուրականից եկածներ: Եղել են նաև Անիից գաղթածներ: Ապուլեխը ժամանակին ունեցել է Վարադա Սուրբ Նշան անունով մի

եկեղեցի և դպրոց¹։ Թուրքերն էպճաղա են կոչում Ապուշխը, իսկ հայերը՝ էպիշեխու։ Ոմանք թուրքերի «էպճաղա» բառը ստուգաբանում են «Ապա Զուղա»²։

Ապուշխյանները մեծ մասամբ զիմել են պանդըխտության, իսկ տեղում մնացողները զբաղվել են արհեստներով։ Արհեստներից առավելապես զարգացած են եղել կոշկակարությունը, հյուանությունը, սրմնագրությունը և այլն։ Ապուշխը եղել է ծառադարդ ու գեղեցիկ մի վայր՝ «հարուստ մրգատու այգիներով»³։

Ակնում և Ապուշխում այն ժամանակ ապրում էին նաև հույներ։ Ենթադրում են, որ հայ կաթողիկոսները ևս եղել են Վասպուրականից գաղթածներ, որոնք հունական հալածանքների ժամանակ ընդունել են հույների դավանանքն ու ծեսերը, պահպանելով իրենց լեզուն, սովորություններն ու անունները։ Ըստ Ինճիճյանի՝ սրանց քահանաների զգեստները եղել են հայկական, բայց ընդունելով հունական դավանանքը, փոխել են նաև տարադը՝ հետեւելով հունականին։ Այդ հայերին կոչել են նաև «ծաթ հայեր»⁴։

Կամարակապն ու Ապուշխը թեպետ ըստ պաշտոնական վիճակագրության առանձին գյուղեր են համարվել, սակայն քաղաքին մոտ լինելու պատճառով զիտվել են որպես Ակնի առանձին թաղեր կամ արվարձաններ⁵։ Ահա թե ինչու Սարգիսը հաշտաւորապես կարող էր կոչվել թե՛ Ապուշխցի և թե՛ Ակնեցի։ Դրանով

1 Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, Ա, Վենետիկ, 1902—1907, էջ 234։ 2. Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 45։ Գ. Սրվանձադանց, Թորոս աղբար, Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 243—249։

2 Հ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, էջ 45։

3 Նույն տեղում, էջ 46։

4 Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, էջ 80։

5 Նույն տեղում, էջ 79։

սկստք է բացատրել նրա տաղերի խորագրերի հիշատակության «Ակնցի գուղէն Ապուջեղցի» բառերի իմաստի միասնությունը:

Ելնելով նրա «տիրացու» հորջորջումից, ինչպես նաև տաղերից մեկի (Ժ) «Ստրուկ դպրիս այցելու լեր» տողից, թերևս կարելի է ասել, որ Սարգիսը, հավանաբար, բարձր ուսում չի ստացել, ապրել ու ստեղծագործել է թերևս իր ծննդավայրում, տիրացու կամ դպիր է եղել եկեղեցում, դպրոցում էլ՝ գուցե ուսուցիչ:

Ակնցիք, նույնիսկ գյուղաբնակները, քաղաքացու կյանք են վարել: Հողի պակասության պատճառով թե՛ գյուղացիները և թե՛ քաղաքացիները մեծ մասամբ դիմել են օտարության կամ պանդխտության: Կ. Պոլսի հայ ամիրաների մի մասը XVIII դարում եղել են Ակնից գաղթածներ: Անհամեմատ բարձր է եղել Ակնից գաղթած ու պանդխտած արհեստավորների թիվը: «Ինչպես ծիծեռնակը, որն իր բուջնն հյուսելուց հետո այս ու այն կողմ է գնում ձագերուն կերակուր բերելու,— գրել է Գարեգին Սրվանձաթյանը,— այնպես էլ աղքատիք դիմում են օտարության»¹:

Տեղեկություններ չկան, որ Սարգիս Ապուշեխցին ևս եղած լինի պանդխտության մեջ, օտար վայրերում: Սակայն, ապրելով կենսական, հասարակական այգայիսի միջավայրում ու պայմաններում, նա չէր կարող չապրել իր ժողովրդի ցավերով ու հոգսերով, չէր կարող չբուժանել իր հայրենակիցների բախտն ու ճակատագիրը:

* * *

Եթե ուղղակի փաստեր չկան քիչ թե շատ ընդհանուր գծերով ներկայացնելու Ապուշեխցու կենսագրությունն

¹ Գ. Սրվանձաթյանց, Թորոս աղբար, Ա, էջ 244—245:

ու ապրած գրական-հասարակական միջավայրը, ահա
դրա փոխարին ավելի լայն հնարավորություն կա դա-
րաշրջանի հասարակական-քաղաքական և գրական-
մշակութային կյանքի ու միջավայրի ընդհանուր պատ-
կերը տալու համար:

XVII—XVIII դարերում Հայաստանը դեռևս գըտ-
նըվում էր երկու բռնակալ տիրությունների՝ Թուրքիայի
և Պարսկաստանի տիրապետության տակ: XVII դարի
վերջերից, սակայն, նրանք աստիճանաբար թուլացան՝
կորցնելով իրենց նախկին ուժն ու հզորությունը: Դա-
րեր շարունակ հարստահարված հայ ժողովրդի մեջ
վերստին արթնացավ ազատագրության հույսը: Պայ-
քարի հեռանկարը դառնում էր շոշափելի և, իսկա-
պես, Սյունիքում այն վերածվեց ժողովրդական հզոր
ապստամբության: Ատելությունն այլադավան բռնա-
կալների նկատմամբ մի կողմից, ազատագրական դա-
դափարների աշխուժացումը, Ռուսաստանից ստացված
օգնության ակնկալությունները մյուս կողմից, հայ ի-
րականության մեջ ձևավորեցին որոշակի դադափար-
ներ ու շարժումներ, մղելով դեպի այն ճիշտ ուղին, որ
հայ ժողովրդի փրկությունը պետք է կապել ռուսական
զորքի հաղթանակի հետ:

Այս մասնակի աշխուժացմանը համադրատապիստն
աշխուժացում նկատվեց նաև արվեստի ու գրականու-
թյան մեջ: Այնտեղ, ուր տնտեսական դարդացման հր-
նարավորություն կար, դարդանում էր նաև գրականու-
թյունը: XVII—XVIII դարերի նշանավոր գեմբերից են
Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նովան, Բաղդասար Դպի-
րը, Պետրոս Ղափանցին և ուրիշներ՝ բանաստեղծու-
թյան մեջ, Մինաս Զուղայեցին, նույն Նաղաշ Հովնա-
թանը, նրա որդին՝ Հակոբ Նաղաշը և ուրիշներ՝ ղեղա-
նկարչության մեջ, Առաքել Դավրիժեցին, Զարարիա

Քանաքեռցիին, Աբրահամ Կրետացիին և ուրիշներ՝ պատմագրութեան մեջ և այլն:

Որքան էլ համեստ լինի Սարգիս Ապուլեիսցու վաստակը, այնուամենայնիւ, նա ևս իր տեղն ու դերն ունի այդ ժամանակաշրջանի հայ գրականութեան զարգացման պատմութեան մեջ: Լինելով հոգեւորական ու բանաստեղծ, ապրելով այնպիսի մի ժամանակ, երբ հայ ժողովուրդը տառապում էր թուրք և պարսիկ բռնակալների լծի տակ, երբ ամեն քաջամարտի ոտնահարվում էր հայի ազգային ու մարդկային արժանապատիւթյունը, երբ մանավանդ թուրքական կառավարութեան կողմից խրախուսվում էր հայի կրոնադարձությունը և, վերջապես, երբ ամեն կերպ խոչընդոտում էին կուլտուրական ամեն մի առաջադիմութիւն, — Սարգիս Ապուլեիսցին մի այդպիսի ժամանակաշրջանում եղել է հայ ժողովրդի այն գործիչներից, որոնք ճիգ ու ջանք չեն խնայել իրենց ժողովրդի գոյատեւման, պայքարի հրահրման ու հայրենի գրականութեան զարգացման համար:



Շարունակելով միջնադարյան տաղերգութեան լավագույն ավանդութիւնները, Ապուլեիսցին իր ստեղծագործութեան համար թեմա է դարձնում միջնադարի հայ քնարերգութեան հիմնական մոտիվները՝ սերը, բնութիւնը, ինչպէս նաև գրում է հոգեւոր երգեր: Նա օգտագործել է բանաստեղծական այնպիսի հնարաններ ու ստեղծանքներ, արտահայտչական այնպիսի միջոցներ և տաղերի տարբեր եղանակներ ու չափեր, որոնք եղել են իր դարաշրջանի բանաստեղծական արվեստի նվաճումները: Եւ, այս իմաստով, Ապուլեիսցու ստեղծագործութիւնը պետք է դիտել որպէս միջնադարի մեր քնարերգութեան ընդհանուր շղթայի մեկ օղակը:

Նրա ստեղծագործութեան ընդհանուր նկարագիրը տալիս են սիրո, դարնան և սերախութեան բանաստեղծությունները, վարդ ու սոխակին նվիրված սիրո այլաբանական տաղը, որոնք արտահայտում են բանաստեղծի կենսասիրությունը, սիրո ապրումներն ու բնութեան նկատմամբ նրա ունեցած հրճվալից տրամադրությունները: Ելնելով նրա ստեղծագործութեան այս առանձնահատկությունից, Ապուլեիսցուն ևս պետք է դնել միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգուների շարքում, թեև նա ունի նաև հոգևոր երգեր: Հետևաբար, նրա ստեղծագործությունը, թեմատիկ առումով, կարելի է բաժանել աշխարհիկ տաղերի, որոնց մեջ մտնում են սիրո և բնութեան երգերը և հոգևոր տաղերի, որոնք նվիրված են Հիսուսի ծննդյանը, Մտեփանոս Նախավկային, Աստվածամորը, Հովհաննես Մկրտչին և այլն:

Սարգիս Ապուլեիսցու ստեղծագործութեան մեջ ուրույն տեղ են զբաղում նրա սիրային տաղերը, որոնք բանաստեղծի ստեղծագործական շնորհքի վկայությունն են: Այս երգերը նրա տաղերի շարքում ամենաուշագրավն են ու հետաքրքրականը, թվով՝ ավելի շատ, բովանդակությամբ՝ խորն ու արվեստով համեմատաբար ավելի բարձր: Ըստ երևույթին, մեզ հասել են Ապուլեիսցու սիրո երգերից մի քանիսը միայն: Դրանք ինքնատիպ են թե՛ իրենց արտահայտած մտքերով և թե՛ կատարման արվեստով: Հակառակ միջնադարյան շատ տաղերգուների, որոնք սերը երգել են այլաբանորեն, ինչպես օրինակ՝ Կոստանդին Նրզնկացին, Գրիգորիս Աղթամարցին, Առաքել Բաղիշեցին, մասամբ՝ Պետրոս Ղափանցին և ուրիշներ, վարդի և բլբուլի կամ Մարիամի անվան տակ արտահայտելով սիրած կնոջ նկատմամբ ունեցած իրենց զգացմունքները: Ապուլեիսցու սերը պարզ է և անսքող, ուղղակի ու բազահայտ: Նրա սիրո երգերը շունեն, օրինակ, Կ. Նր-

ղընկացու սիրո երգերի այլաբանական շղարշը, որը, թեև թափանցիկ է, բայց սքողում է բանաստեղծի անմիջական զգացմունքները: Սերը նրզնկացու համար տիեզերական, աստվածային ուժ է, կենդանության աղբյուր, «Կիւնը, թեև մարմնավոր, ոչ աստվածային էակ, նրա համար հանդես է գալիս գաղափարական պատկերով...»¹:

Մինչդեռ Սարգիս Ապուշեխցին, իբրև նոր ժամանակի բանաստեղծ, տարբերվում է թե՛ Կոստանդին Նրզնկացուց և թե՛ նրան հաջորդած միջնադարյան մեր մշուս տաղերգուներից: Ապուշեխցու սերը պարզ է ու առնմիջական, զգացմունքները խորապես մարդկային: Նրա երգերը տողորված են աշխարհիկ հաճույքի իրական տրամադրությամբ, հասցեագրված իրական կնոջ, սակայն առանց մարմնաբաղձության, նրա տառապանքը նուշնպես իրական է, պարզ ու հասկանալի:

Սիրոյդ թռչնակն անտաքեր ի ներ սրտիս թառեցաւ,
 Լըրով քոյին ուրախառիթ սաստիկ հուրն իմ սառեցաւ,
 Բայց կարօտով տեսողդ քոյին դարձեալ իսկոյն վառեցաւ,
 Նրկն: իմ, թէ դուցէ արդեօք անցեալ եմ իմ նազելոյս,
 Զիս՝ զեղկելիս և զոգբալիս՝ անցեալ եմ իմ սիրելոյս:

(Ա)

Սակայն Ապուշեխցու սիրո քնարական երգերը որքան էլ աշխարհիկ, այնուամենայնիւ շունեն, օրինակ, Նաղաշ Հովնաթանի կենսուրախ ու լիաշունչ երգերի բույրը: Հովնաթանի երգերը կոնկրետ են, սերը՝ իրական ու շոշափելի: Նրա պատկերմամբ սերը կյանքի երջանկության էական մասն է, կյանքի հաճույքը կինն է ու գինին, դարունն է, երգն ու պարը: Նաղաշի երգերում պատկերվում են սիրած կնոջ բարեմասնությունները՝ կամար հոնքերը, մարդարուաշար տոտամները, ծով սալքերը, լուսնանման երեսը, ոսկեթել ժամերը,

¹ Մ. Արեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Բ. Երևան, 1946, էջ 339:

ծաղկահաս ծոցը, քաղցր լեզուն և աչլն, և դա՛ նոր
զգացմունքներ, նոր ապրումներ արտահայտելու հա-
մար: Հովնաթանի երգերը ուրախ ու անհոգ սիրահա-
րի կյանք տեսածի և սեր վայելածի երգեր են: Նա այս-
պես է դիմում իր տիրածին:

Թող երեսդ դնեմ վարսերիդ ուրած ծալին, կարմիր վարդի թւր,
Սպիտակ բուխարիդ վերայ շարած սիւճ խալին, կարմիր

վարդի թւր,

Դու ի՞նչ ես խաբար քեզ համար էրվողի հալին, կարմիր

վարդի թւր,

Կարօտ մնացի ծոցիդ սպրանքին ու մալին, կարմիր վարդի թէր:

Հախուռն չեն Ապուլչիսցու զգացմունքները, նրա սե-
րը զուսպ է ու ամոթխած, նուրբ են նրա հուզաշխար-
հի ելեկջները: Նա արտահայտում է անհույս կամ մերժ-
ված սիրահարի սառնականները, անարձագանք սիրո
տվայտանքներն ու ցաված ապրումները:

Ի բոլոր կեանս բաց ի քէն, ով իմ ցառոցս փարատիչ,
Չունիմ զայլ որ ինձ ցառակից և որ զոր մխիթարիչ,
Եւ դու յինկն ի բաց շրջիս, նեղութեանս իմ անդորրիչ,
Երկնչիմ, թէ դուցի արդեօք անցեալ եմ իմ նազելոյս,
Ձիս զեղկելիս և զոգբալիս անցեալ եմ իմ սիրեկոյս:

(Ա)

Անարձագանք սիրույ բանաստեղծը դժբախտ է ըզ-
րում իրեն. չէ՞ որ ինքը վատություն չի արել, էլ ինչո՞ւ
է սիրածը հեռու և սառը մնում: Ինչո՞ւ է թողել բա-
նաստեղծին, մտերմացել ուրիշի հետ: Ինչո՞ւ է բանաս-
տեղծի բարությանը հատուցում չարությամբ՝ նրան
պահելով անսրտշության մեջ:

1 Նալաչ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ
29:



Վասն է՞ր յինէն ի բաց շրջիս և ընդ ալլում համակցիս,
 Զիս ի՞նչ տեսեր յինէն զշարիս, որով ի բաց իսկ վարիս, իսկ վարիս,
 Եւ փոխանակ իմ բարութեանց հատուցանես զշարիս,
 Ե՛կ ընդ միմեանս դաշնադրեսցուք՝ կամ իմ լեր և կամ նորա, սէր իմ:
 (Գ)

Հայ միջնադարյան սիրոյ բանաստեղծութեան մեջ սա միանգամայն ուրույն երանգ ունի, ինքնատիպ ու անհատական մոտեցում՝ սիրո և սիրածի նկատմամբ: «Կամ իմ լե՛ր և կամ նորա, սէ՛ր իմ», — սա մի նոր մոմենտ է, հոգեբանական նոր գիծ, որ չկա միջնադարյան մյուս բանաստեղծների մոտ: Թլկուրանցու մոտ, օրինակ, նույնպես գանդատ կա սիրածից, բայց նա Ապուլչիսցու պես պայման չի դնում, այլ ընդհակառակը, պահանջում է, որ սերը լինի փոխադարձ, երկուստեք:

Իմ սիրտս ու խելքս ու միտքս սիրով է առ քեզ,
 Լաւ որ սիրես զու զիս՝ սիրեմ ես քեզեզ՝:

Ապուլչիսցին ես սիրո երգերում նկարագրում է իր նվիրվածութիւնը սիրած էակին, առանց որի նա «խելագարվում» է, «սրահարվում»: Եւ կարծում է, թե «սրահարվելով», «վիրավորվելով» կամ «խելագարվելով» կարող է փափկացնել սիրածի սիրտը, արժանանալ նրա սիրուն, հասնել փոխադարձ սիրո, որին ձրգտում է ինքը: Անկաշառ է նրա սերը, անկաշկանդ, սղնիս ու մաքուր: Առանց սիրո նա ողբերգութիւն է ապրում: Սերը նրա համար բարութեան ակունք է, աղնրվութեան աղբյուր: Սիրուց մերժված նա կոկիկի է, նվաստ ու վիրավոր, կարեկցութեան արժանի:

¹ Հովհաննէս Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրութեամբ՝ էմ. Պիլադլանի, Երևան, 1960, էջ 145:

Ով իմ պայծառատիպ, ո՛հ, ջինջ և մաքուր հայելի,
 Աւա՛ղ, աւա՛ղ,
 Քան զամենայն գերազանցեալ, ո՛հ, բիրոց ցանկալի,
 Որքան ի քէն մերժեցայ, ո՛հ, եղէ եղկելի,
 Աւա՛ղ, աւա՛ղ,
 Սիրով սիրոյդ սրահարեալ, ո՛հ, վիրաւորեցայ:
 (Գ)

Այս տրամադրութիւնները, անպատասխան կամ մերժված սիրո միջտն ու մորմոքը կան միջնադարյան մեր շատ տաղերգուների մոտ: Սա նորութիւն չէր: Հովասափ Սեբաստացին էլ, օրինակ, ունի անպատասխան սիրո երգեր, նրա սիրածն էլ, Ապուշեխցու սիրածի նման, չի խոսում բանաստեղծի հետ, խռով է ներանից և նրա աչքը պահում է լալով՝ երբեմնի սիրո իրենց երդումը դրժած:

Յէ՞ր կու նայիս դու յիս ճկրով,
 Կու գաս, անցնիս խիստ խռով
 Յէ՞ր շես խօսիր դու յիս սիրով,
 Յէ՞ր կու պահես զաշիս լալով:

Ուիտ ենք դրեր հետ քեզ զավլով,
 Յէ՞ր պէտքայ եղար շուտով.
 Յիս ի՞նչ դտար վատ խօսելով,
 Որ կանցնիս թթիւտեղով¹:

Սակայն Սեբաստացին «հաշտութեան եղը» է փնտրում, ջանում մերականեղնել կապը, պահպանել սերը: Եթե Սեբաստացին պաղատում է սիրածին, թե՛

Վանց աստուծոյ, հաշտէ շուտով
 Եւ զրուցէ ծիծաղելով,
 Ես կու նայիմ հետ քեզ սիրով,
 Յոտից մատանց ես նազերով²,

նրա համար ևս թանկ է մարդկային իր արժանապատ-

¹ Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծութիւններ, Երևան, 1964, էջ 83:

² Նույն տեղում, էջ 83:

վությունը, որից էլ դրզված եթե նա սպառնում է, թե՝

Մեկ մ'ալ սիրեմ՝ քան զքեզ շնորհով,

Դու փռշտան դառնաս շուտով՝,

այնուամենայնիւ, նրա այս խոսքը ավելի շուտ վերըստին հաշտվելու հորդոր է, սիրո հավաստում: Մինչդեռ Լևոնը չէր ցանկանում ավելի խորն է ապրում այդ տառապանքը, նա պահանջում է, սպառնում, բողոքում: Նրա սպառնալիքը, որ կարող է վերածվել իրականության, ընդգծելով նրա մարդկային բնավորության հաստատակամությունը, միաժամանակ նրա տառապանքի խորության արտահայտությունն է: Իր անպատասխան սիրո պատճառը նա մերթ փնտրում է իր մեջ, թե որևէ բանով արդյոք ինքը չէ՞, որ վիրավորել է սիրածին, մերթ ուրիշների չարախոսության, ուրիշների վատության մեջ, մերթ էլ երգվում է ամենախոր անկեղծությամբ իր սիրո անկեղծության համար, իր հավատարմության համար:

Ուստի իմ լիցի ոչ դոք սիրել, աղնիւ, բաց ի քէն, աղնիւ:

Թէ կարելի լիներ տալի զկէս հողոյս ի քո պատիւ, ի պատիւ,

Զի թէպէտ շատ աղնիւ տեսի, բայց քան զքեզ դոք իմով սրտիւ,

եկ ընդ քեզ դաշինս արասցուր՝ կա՞մ նորա լեր և կա՞մ իմ, սէ՞ր իմ:

(Դ)

Այստեղ է, որ Աստուծոյն տարբերվում է իր նախորդներից: Սիրած աղջկա մեջ նա գտնում է իր տենչերի կատարումը, կյանքի իմաստը: Նրան է, որ նա սպասում է ժամեժամ, նրա համար է, որ ապրում է, շնչում, ուրախանում ու տխրում: Նրա համար է, որ բանաստեղծը պատրաստ է տալու իր կյանքը, իր հոգին: Ու թեև սիրած աղջիկը նրա համար անհասանելի է, սակայն, ոչ թե բառի միջնադարյան առումով, այլ ուղղակի իմաստով: Աղջիկը սիրում է ուրիշին, իսկ

1 Հովնաթի Սեբաստացի. Բանաստեղծություններ, Երևան, 1964 թ. 84:

սիրտհար բռնաստեղծը, մեղամաղձիկ տրամադրութ-
յան մեջ, արատարովի սպասում է պատասխա-
նի, սպասում իր սիրտ արձագանքին, սիրած աղջկա
վճռին՝ բանաստեղծի^նը, թե^ն ուրիշներ լինելու:

Ապուշխցու սիրտ երգերի հոգեբանությամբ բնորոշ
գիծը նրա սպասումի, սիրած էակին մինչև վերջ նվիր-
ված լինելու մեջ է: Նա սպասում է վարանման մեջ,
տառապում սիրուց, տապնապում խելահեղսրեն, մինչ-
դեռ սիրած աղջիկը լռում է բար անտարբերությամբ:
Սերն աչքում է, տոշորում երիտասարդ սիրահարին,
խել աղջիկը կարծես հաճույք զգալով նրա աչք տան-
ջանքներով^ն լռում է շարունակ, թողնում անպատաս-
խան.

Ի իմեալ գերիս աստընջական,
Քո ծառայն եմ պատրաստական,
Սիրովդ եղեալ տարադրական.
Արի՛, սէ՛ր իմ, արի՛, արի՛
Արի՛ բնկալ զծառայդ:

(b)

Ապուշխցու երգերում փոխադարձ սիրտ ըմբռնումը
թախանձանքի երանգ ունի: Նրա երգերում չկա սիրտ
երջանկություն, սիրտ վայելք ու բուռն հրճվանք: Գրանք
ազնիվ տառապանքի ու մեղմ տխրության շնչով են
համակված: Նա կարծում է, թե խնդրելով կարող է
նվաճել սիրած աղջկա սերը, և պաշատում է անկեղծ
տանջանքի հառաչանքը շուրթերին, փորձում է մերժ-
ման հեռեանքի ծանր պատկերով սղոթել նրան.

Որ թէ ի բաց վանեա զգերիս,
Մով՛ ու մտախուզ պատեն ցիս,
Վայրի գազանք գիշատեն զիս.
Արի սէր իմ, արի, արի,
Արի բնկալ զգերիս:

(b)

Ու միամտաբար սիրած կնոջ անտարբերությունը
վերագրում է ինչ-որ մեկի շարախոսությանը, նրա
խարդավանքին.

Ոչ գիտեմ, թե որո՞ւմ արգեօք շարախօսի յարեցար...
(Ա)

Սարգիս Ապուլեխցու երգերը գողտրիկ, անկեղծ սի-
րո թրթիռներ են: Նրանց մեջ վերարտադրված են բա-
նաստեղծի հույզերն ու ապրումները, նրա հոգու տվյալ-
տանքները: Նրա սիրո երգերը սրտաբուխ են, անմիջա-
կան ու հուզիչ: Զգացվում է, որ բանաստեղծն ապրել է
այն բոլորը, ինչ պատկերել է և քանի որ ապրված
զգացմունքների արտահայտություն են դրանք, ուստի
նրա երգերն էլ ունեն վարակիչ ուժ: Դրանք հուզում են
ընթերցողին՝ առաջ բերելով համապատասխան հույզ
ու տրամադրություն:

Առանց ծագման քո արևուն՝
Ոչի քուն եմ և ոչ արթուն,
Տատանեալ շուրջ գամ երերուն.
Արի՛, սէ՛ր իմ, արի՞, արի՞,
Արի՛ ընկալ զգերիս:

(b)

* *
* *

Ապուլեխցու տաղերը տոգորված են ժողովրդական
ոգով ու կյանքով, գրված են գրական լեզվով՝ խոսակ-
ցական լեզվի հյութեղ տարրերի և գրաբարի հարուստ
բառազանգի պատշաճ օգտագործմամբ: Ապուլեխցու
օգտագործած շփերը հիմնականում դարի մյուս բա-
նաստեղծներն էլ են օգտագործել, մի կողմից հավա-
տարիմ մնալով միջնադարյան տաղերգության ավանդ-
ներին, իսկ մյուս կողմից՝ ազատորեն ներմուծելով ա-
շուղական բանավեպի ու երգարվեստի հնարաններն

ու չափերը, կրկնականերն ու ձայնարկությունները, երգի
եղանակները և այլն: Ահա, օրինակ.

Գեղեցկափայլ և նագելի,
Եւ իմ պաշտոն, ջինջ հայելի,
Աներկրայ սիրով սիրելի,
Սիրոյս գատուեցայ,
Զոր արարի,
Ես արարի.
Արբեալ գրտուեցայ:

Կարմրափայլ վարդ անմահ,
Գեղեցկափայլ և սիրական,
Յարափայլ գունով գանազան
Սիրոյս գատուեցայ,
Զոր արարի,
Ե՞ս արարի,
Արբեալ գրտուեցայ:

(Բ)

Թեև իր ստեղծագործությունների մեջ Աստուչիսցին
մեծապես օգտագործել է միջնադարյան տաղերգուե-
րին հատուկ պատկերներ ու զրեւածե, բայց նա, այնու-
ամենայնիւ, ունի թե՛ իր մտածելակերպը և թե՛ իր վե-
րաբերմունքը կյանքի ու սիրո նկատմամբ: Նրա սիրո
երգերը աչքի են բնկնում ոչ միայն իրենց արտահայտած
տրամադրությունների երանգներով, այլև ներշնչանքի
անկեղծությամբ ու կատարման արվեստով:

Աստուչիսցու սիրո երգերը, ի մեծի մասի, անձնա-
կան բնույթ ունենւ չովհ. Թումանյանը, խոսելով Նա-
ղաշ Հովնաթանի մասին, նկատել է. «Իր բանաստեղ-
ծությունները հաճախ մասնավոր սիրային նամակա-
դրության բնավորություն ունեն, և եթե երգում է, նը-
պատակն էն չի, որ ձենը հասնի հեռու դարերին, այլ

իր «այլանեն» մինչև սիրածի վարդափթիթ պարտեզը»¹։

Այսպես կարելի է ասել նաև Ապուլեիսցու մասին։ Եթե Կոստանդին Երզնկացու մոտ սերը աստվածային, տիեզերական ուժ է, սրբություն, կինը՝ պաշտելի ու անհասանելի էակ, իսկ Հովնաթանի համար կինն իրական է ու մատչելի և նա վայելում է նրա սերը, ապա Ապուլեիսցու մոտ թեև կինը նույնպես երկրային է, իրական, բայց անհասանելի է, սերը՝ անպատասխան ու տառապագին։ Նաղաշի համար անպատասխան սեր չկա. նա սիրում է ու սիրվում և բախտավոր է իր սիրո մեջ։ Եվ եթե տխրում էլ է, լալիս, արտասվում, ապա դա ոչ թե վշտի արցունք է, այլ կարոտի և ուրախության։ Այդպես չէ սակայն Ապուլեիսցին. նրա սիրտը համակված է անպատասխան ու մերժված սիրո խորունկ ցավով, և նրա երգն էլ մերժված սիրահարի տխուր տրտունջներ են, հառաչանքի ու կարոտի կանչեր։

* * *

Քննելով Ապուլեիսցու ստեղծագործությունը, հատկապես նրա սիրո տաղերը, տեսնում ենք, որ դրանք միջնադարյան տաղերգուներից բացի, առավել հիշեցնում են Բաղդասար Դպրի, Պետրոս Ղափանցու, Գրիգոր Օշականցու և այլոց տաղերը։ Նման լինելով հանդերձ, Ապուլեիսցու ստեղծագործությունը մնում է ինքնուրույն։ Ընդհանուր առմամբ դա դարի ոճի ու ոգու նմանություն արտահայտությունն է, և մասնավորապես, այս կամ այն բանաստեղծի ազդեցությունը։

Ապուլեիսցու ստեղծագործության մեջ առանձնապես նկատելի է նմանությունը Բաղդասար Դպրի տաղե-

¹ Հովնանեն Թումանյան, Նրկերի ժողովածու, հ. 4, Նրևան, 1951, էջ 189։

որին Իսկ դա չպետք է դիտել պատահական զուգադիպություն, այլ պարզապես իբրև արգասիք նույն ուղղության և տվյալ ժամանակի բանաստեղծական ընդունված ձևերի օգտագործման:

Ինչպես ասացինք, Ապուլիսցու համար անհասանելի է սիրած կինը: Այդպես է նաև Բաղդասար Գալրի համար՝ ուրույն երանգով: Հախուռն է նրա տենչանքը, վայելքի ցանկությունը՝ ամհագ, կարոտը՝ մշտատև ու սերն անհունորեն անհասանելի:

Թէպէտ կարի յոյժ փափաղիմ տեսիլդ քո ինձ տեսանիլ,
Բայց դի կարի հետադոյն ես, ոչ կարեմ քեզ հասանիլ,
Ուր լինէր ինձ խոտիկ մ'եղնիլ՝ դիմացդ առջև բուսանիլ.
Այլ վա՛յ, աւա՛ղ, խոր հոռաշէլս մինչև յե՞րբ, մինչև յե՞րբ,
Մինչև յե՞րբ, սէր իմ՝

Դժվար չէ նկատել, որ Բաղդասար Գալրի այս բանաստեղծության տրամադրությունը միանգամայն ներդաշնակ է Ապուլիսցու «Ի բոլոր կեանս բաց ի քէն» սկսվածքով տալի տրամադրությանը: Երկու տաղերի տրամադրությունների նմանությունը ոչ միայն այն է, որ երկուսն էլ խոսքն ուղղում են հեռացած սիրածներին, — սա հիմնականն է, — այլև այդ նմանությունը խորանուժ է տաղաչափական ընդհանրությամբ: Բաղդասարը դիմում է իր սիրածին՝ «Ելար յինէն, ու դիս թողեր յոյժ կարօտ քո երեսին» խոսքերով, իսկ Ապուլիսցին նույն վիճակն արտահայտում է այսպես.

Գոհար վարդի որակովեամբ ի պարտեզն իմ փայլեցար,
Նախապէս դինն փարելով՝ արդէն ի բաց վարեցար,
Ոչ գիտեմ թէ որո՞ւմ արդեօք չարախօսի յարեցար.
Երկնչիմ, թէ դուցէ արդեօք անցեալ եմ իմ նազելոյս,
Ձիս՝ ղեղկելիս և զողբալիս՝ անցեալ եմ իմ սիրելոյս:

(Ա.)

1 Պաղտատար Գալիւ, Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, Երեւան, 1958, էջ 94:

Ավելի ակներև են Ապուլչիցու և Բաղդասար Դպրի ստեղծագործական նմանությունները: Դա երևում է, օրինակ, Ապուլչիցու «Հրով սիրոյդ, ով իմ ազնիւ» սկզբնատողով տաղի և Բաղդասար Դպրի «Հրով սիրոյդ վառեալ գիրիս» բանաստեղծութեան զուգադրումից: Այստեղ ոչ միայն տրամադրութեան, տաղաչափութեան և արտահայտչամիջոցների նմանություններ կան, այլև նման են երկու տաղերի բանականակերը: Ապուլչիցու տաղն ավելի ընդարձակ է. նրա տաղի տնագլուխ տառերը հոգում են. «Հուր վառեալ», իսկ Բաղդասարինը՝ միայն «Հուր»:

Անշուշտ կան նմանություններ, որոնք գալիս են ընդհանուր ակունքներից. դրանք ժողովրդական խաղ ու տաղի բանաստեղծական հնարանների և աշուղական երգարվեստի ձևերի օգտագործման ընդհանրությունն են: Ակներև է թե՛ Բաղդասար Դպրի և թե՛ Սարգիս Ապուլչիցու ստեղծագործությունների առնչությունը աշուղական երգարվեստի, եղանակների և տաղաչափական առանձին հատկանիշների օգտագործման հետ: Եվ դա միանգամայն հասկանալի է: Սարգիս Ապուլչիցու հայրենիքը՝ Ակնը, ինչպես հայտնի է, հռչակված է որպես սիրո և պանդխտության ժողովրդական երգերի հայրենիք: Հայտնի է նաև, որ սկսած դեռ XVII դարից մեր միջնադարյան բանաստեղծությանը զուգընթաց դարգանում էր աշուղական բանաստեղծությունը:

Արդեն նաղաշ Հովնաթանի ժամանակ որոշակի վերաբերմունք կար աշուղական բանաստեղծության նրկատմամբ: Եթե մինչև Հովնաթանը աշուղական պոեզիան գտնվում էր ձևավորման պրոցեսում, ապա շնորհիվ նաղաշի, այն ձևավորվեց ու ամբողջացավ, գրավելով իր ուրույն տեղը մեր գրականության պատմության մեջ: Հովնաթան նաղաշին հաջորդած Սարգիս Ապուլչիցին, ահա, ոչ միայն պահպանեց ու պարզա-

րեց միջնադարյան մեր պոեզիայի բնորոշ գծերը, այլև անսքող հակումը ցուցաբերեց աշուղական բանաստեղծության առանձին գծերի օգտագործման նկատմամբ։ Նա լավատեղյակ էր ժամանակի գրական ուղղության, մասնավորապես՝ բանաստեղծության պահանջներին ու խնդիրներին։ Սահմանազատվելով մի կողմից աշուղական պոեզիայից, բայց և կրելով նրա ազդեցությունը, մյուս կողմից՝ Ապուլեիսցին տարբերվում է նաև իր ժամանակի բանաստեղծներից իր ինքնուրույնությամբ և շոշափած թեմաների գրեթե ման իր երանգներով։ Հայտնի է, որ աշուղները գրում էին մեծ մասամբ թուրքախառն հայերենով, բարբառով։ Ապուլեիսցու տաղերը շունեն անհարկի օտարաբանություններ և զուտ բարբառային արտահայտություններ։ Նա թուրքերենի դիմել է միայն այս կամ այն երգի եղանակը հուշելու, նշելու համար։ Օրինակ՝ Ա տաղի եղանակի համար նշված է. «Այեք էնդըմ գրդանընդայ», Բ տաղի համար՝ «Իլք աշքամդան աղսուր մալում, ամա՛ն», Գ-ի համար՝ «Բիր եալանջի քալիրայ դորմաղը քարին, ամա՛ն, ամա՛ն», Դ-ի համար՝ «Ահտըմ օլսն սուրմայայիմ» և այլն։

Ի դեպ, թուրքերեն երգերի եղանակների հիշատակումներ կան նաև Բաղդասար Դպրի տաղերի համար։ Օրինակ՝ նրա «Վարանելով, վարանելով մոլար դեզերիմ, աւա՛ղ» սկզբնատողով տաղի համար նշված է թուրքերեն «Գի դէր օլգում այ բիր թանեմ դաղլէր» երգի եղանակը¹։

Սա ցույց է տալիս այն անմիջական կապը, որ կա Սարգիս Ապուլեիսցու ստեղծագործության և աշուղական պոեզիայի միջև մի կողմից, մյուս կողմից՝ այն առնչությունն ու ընդհանրությունը, որ նրա ստեղծա-

¹ Պաղտատար Դպիր, Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, էջ 72։

գործութիւնն ունի XVIII դարի մեր տաղերգութեան հետ:

Ուշ միջնադարում տաղերգուներն իրենց ստեղծագործութիւնները գուգադրում էին աշուղականին: Ինչպէս նկատել է Արշակ Չոպանյանը, նրանք հանդես եկան այն ժամանակ, երբ մի կողմից լուծւում էին տաղերգուները, իսկ մյուս կողմից՝ հանդես էին գալիս աշուղները: Եւ բնական է, որ Ապուշխանյու ստեղծագործութեան մեջ ակնառու են միաժամանակ միջնադարյան տաղերգութեան և աշուղական երգերի մոտիվները, տաղերգութեան և աշուղական բանարվեստի շատ զմերի միահայտումը և միասնութիւնը: Ապուշխանյու սիրո երգերը դրանց լավագոյն օրինակներն են: Դրանք իրենց ոտանձին հատկանիշներով նման են միջնադարյան տաղերին նույնքան, որքան և աշուղական երգերին՝ թե՛ իրենց տաղաչափութեամբ և թե՛ հանգաւորմամբ ու երգի եղանակներով: Ահա, օրինակ, Ապուշխանյու «Գեղեցկափայլ և նայելի» սկզբնատողով տաղից մեկ տուն.

Յնծութիւն հոգոյս ժամեմամ,
Ի բաց մեկնեալ խիստ տարածամ
Եւ բերկրութիւն իմ յարածամ,
Սիրոյս զատուեցայ,
Զոր արարի,
Ե՞ս արարի,
Արբեալ զլոտուեցայ:

(Բ)

Եթե առաջին երեք նույնահանգ տողերին բնորոշ է հրնշեղութիւնը, որը ուշ միջնադարի տաղերգութեան հատկանիշներից է, ապա վերջին չորս տողը, որ տաղի կրկնակն է, բնորոշ է ժամանակի աշուղական երգերին: Բանաստեղծական տան փոփոխութիւնը ևս ավելի շուտ առնչվում է աշուղական, քան միջնադարյան տաղերի

տների կառուցվածքին: Այստեղ արժե հիշատակել Գարեգին Լևոնյանի մի առիթով ասածը Բաղդասար Դպրի մասին. «...Իր շատ երգերով մի տաղասաց է, ինչպես մի Թլկուրանցի, մի Աղթամարցի և շատ երգերով էլ մի աշուղ, ինչպես մի Շիրիհ, մի Զիւլանի»¹: Նույնը կարելի է ասել նաև Սարգիս Ապուլեխցու մասին:



Ապուլեխցու ստեղծագործության մեջ առանձնակի արժեք ունեն նաև դարնանը և բնությանը նվիրված տաղերը: Հիշեցնելով միջնադարյան մեր մյուս տաղերգուների այդ թեմայով գրված տաղերը՝ միաժամանակ գրանք նոր երանգներ ունեն, որոնք էլ հարստացնում են միջնադարյան տաղերգության այդ մարզը: Բնության գույքի ու գարնան պատկերմանը Ապուլեխցին նվիրել է հավանաբար ավելի շատ երգեր, քան հայտնի են մեզ: Ըստ սկզբնատողերի այդ թեմայով գրված նրա երգերը հետեւյալներն են. «Ահա էհաս ազնիւ գարուն», «Հարաւային հողմունքն հնչեն» և «Գարնան օրերն եկեալ հասին»:

Ինչպես հայտնի է, Կ. Նթղնկացին գրել է բնության ու դարնան երգեր. «Ահա գիշերս էանց», «Այսօր եղույ հողմրն գարնան», «Այսօր եղև պայծառ գարուն» և այլն: Այդ թեման այնուհետև շարունակվեց անընդմեջ ու հարատևեց մինչև ուշ միջնադարի բանաստեղծները՝ Բաղդասար Դպիր, Պետրոս Ղափանցի, Գրիգոր Օշականցի և այլք: Նրանցից միայն հաջորդած մեր մյուս տաղերգուներն ավելի խորացրին այն, ազատելով կրոնական շղարշից, դարձնելով իրենց ապրումների ու զգացմունքների արտահայտման միջոց:

¹ «Տեղեկագիր գիտ. և արվեստի», Երևան, 1927, № 2, էջ 129:

Ապուշեխցին գովերգում է բնության զարթոնքը, դարունը: Իր նախորդներից շատերի նման, նրա երգերում գարունն ու հայոց զատիկը, վարդն ու սոխակը, ծառն ու ծաղիկը, ծիրանին ու նշենին, թղենին ու ընկուզենին,— այս բոլորն ունեն ուղղակի, և ոչ թե այլաբանական, կրոնական իմաստ: Դրանք աշխարհիկ սյատկերներ են, աշխարհիկ երեւոյթներ, աշխարհիկ ու մարդկային իրական զգացմունքներ արտահայտելու համար: Ահա թե ինչու Ապուշեխցու այդ երգերը կարողալիս ընթերցողը բոլորովին չի էլ մտաբերում, որ գործ ունի մի տիրացուի, հոգեւորական մի երգչի հետ: Ընդհակառակը, այն տպավորությունն է ստացւում, որ դրանց հեղինակը բնության սիրով համակված մի երիտասարդ է, փարված կյանքին ու աշխարհին, հոգին լի վարդազունյն տպավորություններով, երազներով ու սպասումներով: Բնության վերակենդանությունն ու զարթոնքը, գարնան հրճւանքը, հրճւանք ու խինդ են սպասձառում նաև բանաստեղծին.

Հարաւային հողմունքն հնչեն, զբոլոր բնութիւնս զարդարեցին,
 Գարնան գուշակ թռչունքն եկեալ՝ զլսելիս հիացուցին:
 Բոյսը ամենայն ընդ բուն տնկոց՝ զկոկոնս իւրեանց արձակեցին,
 Ի յարմատոց բողբոջեցեալ՝ զհամայնս տերեւս իւրեանց բացին:
 Բոլոր ծաղկունքն արտաշնդեալ՝ զզօրութիւն իւրեանց ցուցին,
 Բուրմամբ հոտոց անուշութեան՝ զհամայն բնութիւնս մայլեցուցին:
 (Է)

Բնությունն Ապուշեխցու համար ստեղծագործական ներշնչարան է: Եթե նախորդ բանաստեղծների երգերում, և հատկապես Հովնաթանի մոտ, բնության նկատարարությունը զուգակցւում է սիրո սլատկերման հետ և կազմում ամբողջական ներդաշնակություն, ապա Ապուշեխցու մոտ այդպես չէ: Նրա մոտ միայն բնությունն է իր գեղեցկությամբ ու հմայքով, զարունը՝ իր զարթոնքով, ծառ ու ծաղկով, արևով ու բույրով:

նա երգում է գարունը, նրա հարուցած ընդհանուր
հրձվանքը, նրա գեղեցկությունը:

Ահա կոկոսներն ցրցվեցան
եւ Եր ըստ օրէ լցվեցան,
նուէն ծիրանոյն բացվեցան
եւ ալլ բաղումք ի միասին:
Բախճանական եղանակին,
Իսկոյն յայտնին ի սրարտիզին
Բոլոր ծաղկունքն ընդ վարդենոյն,
եւ տատրակաց ձայնքն լսին:

(Ը)

Վերջին հաշվով Հովնաթանի գարնան երգերի կեն-
ստրախությունն էլ դալիս է նրա սիրտ երգերի վայել-
քից, նրա երջանկությունից ու կենսահաշակեցողությունից:
Գարունը լրացնում է նրա հաճույքը, կրկնապատկում
խինդն ու բերկրանքը: Անցողիկ կյանքի հաճույքից ու
բնության մշտափոփոխ գեղեցկությունից նա ուզում է
քամել հաճույքի ու վայելքի իր գավաթը: Այդպես չէ,
սակայն, Ապուշեխցին: Ներբողելով գարնան գեղեցկու-
թյունը, հրձվելով նրա բույրով ու թուլրով, հավքերի
երգով ու կանչով, Ապուշեխցու երգերում ընդդժմում է
միայն կյանքի հրավերը, բնության սերը:

Սարգիս Ապուշեխցու գարնան ու բնության տաղերը
ևս իրենց բովանդակությամբ, պատկերներով ու տա-
ղաչափությամբ նման են Կոստանդին Երզնկացու,
Հովհաննես Թլկուրանցու, Հովասափ Սեբաստացու,
Գրիգորիս Աղթամարցու և, հատկապես, Պետրոս Ղա-
փանցու և մասամբ Բաղդասար Դսյրի նուէն թեմայով
զրված տաղերին: Այսպես, օրինակ, Ապուշեխցու «Ահա
էհաս անխա գարուն» տողով սկսվող տաղը հիշեցնում
է Կոստանդին Երզնկացու «Ահա եղև պայծառ գարուն»
տաղը, ասլա միջնորդաբար նաև ուրիշ տաղերգուներին,
որովհետև նրանք ևս իրենց հերթին աղղվել են Երզնի-

կացուց: Ավելորդ չենք համարում այդ նմանությունները: Զույց տալու համար կատարել մի քանի ղուլադրություն՝

Պատանդին երգեկացի

Անա եղև պայծառ զարուն,
Հոտըն բուրնաց անուշ վարդուն,
Ձայնըն քաղցրիկ զայր պլպուլուն,
Եւ եղանակըն հաւերուն:
Ծաղկանց դաշտերըն գունդգուն,
Սըփոին տերեւըն ծառերուն,
Յորդորեցան ջուր՝ զետեւուն,
Հողան ձրկունք ի մէջ ծովուն¹:

Սարգիս Ապուշխյի

Անա էհաս ազնիւ զաւուն,
Նորեցաւ եղանակ տարոյն,
Նոր ի նորոյ առատրեցան
Ծնունդք խաշանց և զսոսերուն:
Հալեցան ձիւնքըն սարերուն,
Յորդորեցան ջուրքըն ձորերուն,
Հոտարոյր ծաղկամբ գոյնզգոյն
Հովիտք և դաշտք են զարդարուն:
(Չ)

Բաղդասար Դպիր

Տես, թէ դիարդ վառեալ վառին
Ծաղիկսն ի գոյնս և շողշողին,
Այգիքն ամէն բերկրաբուրին,
Եկ, սիւշի, ուրախացիր²:

Սարգիս Ապուշխյի

Նախ մանուշակն կապտագոյն,
Ընդ նոսօֆրին շողափայլին,
Եւ այլ ծաղկունքն զհետ միմեանց
Ի պարտիզունս բերկրաբուրին:
(Է)

Պետրոս Ղափանցի

Արդ նանկին և նշնին ծաղկեցաւ,
Եւ վարսատու արմատենին
Բարձրացաւ,
Նոճն ընդ սօսուոյն փրնջատրեալ
Ճոխացաւ,
Երկիրս երկնից համանմանաւ
Նոյնացաւ³:

Սարգիս Ապուշխյի

Անա կոկոռն ցըցվեցան,
Եւ օր ըստ օրէ լըցվեցան,
Նուշն ծիրանոյն բացվեցան,
Եւ այլ բազումք ի միասին:
(Ը)

Մեր նուագատակն էր զույց տալ այն առնչությունն ու նմանությունները, որոնք կան Ապուշխյացու և միջնա-

¹ Պատանդին երգեկացի, Տաղեր, էջ 134:

² Պաղդասար Դպիր, Տաղիկներ սիրո և կարօտանաց, էջ 117:

³ Պետրոս Ղափանցի, Գրքոյի կոչեցեալ երգարան, Կ. Պոլիս, 1772, էջ 7:

դարյան մեր մշուս տաղերգունների բնությանը և դար-
նանը ձոնւած կրգերում:

Այժմ անդրադառնանք Ապուլեիսցու՝ վարդին և բըլ-
բուլին նվիրւած տաղին: Այս տաղը ևս նորություն չէ
միջնադարյան մեր բանաստեղծության պատմության
մեջ: Նրա ակունքները դարձյալ գալիս են Կոստանդին
Երզնկացուց: Ընդհանուր սումամբ՝ այն պատկանում է
միջնադարում շատ տարածւած ալլաբանական երգերի
թվին, սիրո ալլաբանական պատկերմանը: Ապուլեիս-
ցու այս տաղի հիմնական դադափարը նույնպէս սիրն
է: Սիրն է, որ խինդ ու հրճւանք է պարգեւում մարդուն,
սեր, որ ներշնչում ու կյանք է տալիս աշխարհին, դար-
դարում կյանքը: Հարադատ մնալով Ժողովրդական եր-
գի բանաստեղծական ձևերին՝ Ապուլեիսցին թարմ
պատկերներով և ինքնուրույն մոտեցմամբ է արտա-
հայտում վարդի ու բլբուլի սիրավեպը, նրբորեն բացե-
լով սիրահար սրտերի թրթիռները: Բանաստեղծությու-
նը, ըստ էության, մի զուգորդ է, ուր սիրահար բլբուլի
շուրթերով խոսում է սիրահար երիտասարդը, վարդի
շուրթերով՝ աղջիկը: Անմիջական է նրանց զգացմունք-
ները, պարզ ու անկեղծ: Ապուլեիսցին ապրել է սիրո
այդ զգացմունքները և դրա համար էլ նա կարողանում
է նույն զգացմունքներով համակել նաև ընթերցողին:

Ահա, թե ինչպիս է գիմում բլբուլը վարդին.

Սիրով քոյին միշտ տատանեալ,

Աստ և անդ ևմ շըբջաբերեալ,

Տիւ և դիշեր ոչ դադարիմ,

Եւ ոչ ալ ինչ մտաբերեալ:

(Թ)

Վարդը պատասխանում է այսպես.

Վասն է՞ր աչդբան բառնաս կակտն,
Բ՛վ գերադնիվ և սիրական,
Զի քան զքեզ սիրով իմով
Զունիմ զայլ ինչ ասպնջական:

(Թ)

Փոխադարձ սիրո այս խոստովանությունն էլ ուրա-
խությամբ է համակում բլբուլի սիրտը: Փարատվում է
նրա տխրությունը, հուսահատ տրտմությունը փոխվում
պայծառ տրամադրության: Նա կյանքից ու աշխարհից
էլ ոչինչ չի ուզում, բայց Վարդի սիրտը: Լսելով Վարդի
պատասխանը, որ նա բացվել ու բուրում է սիրո հա-
մար, նրան մխիթարելու և խնդություն տալու համար,
բլբուլը իրեն զգում է երջանիկ, և պայծառ այս տրա-
մագրությամբ ու փոխադարձ սիրո զգացման հրձվան-
քով էլ ավարտվում է Ապուլեիսցու այս գողտրիկ բա-
նաստեղծությունը: Իրեն համակած խնդությունն այս-
պես է արտահայտում բլբուլը.

Որ գտեաւաց ձայն քո լուսչ,
Բերկրեալ իսկոյն և զուսրճացչ,
Այլ զի՞նչ կամիմ այսուհետե,
Բոլոր անձամբ ուրտիացայ:

(Թ)

Ահա և Վարդի պատասխանը.

Եթէ սիրով վստեալ վառիս,
Ոչ զազարիս և ոչ թառիս,
Եկ և աես զիս ի պարտիզումս,
Որով իսկոյն մըխիթարիս:

(Թ)

Պետք է նշել, սակայն, որ այս երգը սովորական այն
այլաբանությունը չէ, որ տարածված էր ավելի վաղ
զարերում, Ապուլեիսցուն նախորդած տաղերգուների
մոտ: Ապուլեիսցու նախորդները ալլաբանության էին

դիմում, որովհետեւ թույլատրված չէր բացահայտ սեր երգելը: Նրանք վարդ են երգել սեր հրդած լինելու համար: Այդպես չէր, սակայն, Ասուլչեխցու դարաշրջանում: Սերը երգում էին ազատ, նկարագրում պարզ ու բացահայտ, և աշխարհիկ բովանդակությամբ երգերն այնքան էին բնորոշված, որ այլաբանությունը, Աբեղյանի բնորոշմամբ, զրկվել էր իր հին իմաստից և դարձել էր արդեն միմիայն բանաստեղծական դարդ և դուր էր գալիս դեռևս ուշ միջնադարի մարդուն: «Մեր սիրո երգը, — գրել է Մ. Աբեղյանը, — որ սկսված էր նախ՝ աստվածածնի գովքով, ապա վարդ ու սոխակի պատկերով, Կոստանդնի ձեռքով ազատվում է այլաբանությունից, և եթե հետադաշում ևս այլաբանության են դիմում բանաստեղծները, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել, այլ որ այլաբանական ձևը դուր էր գալիս կրոնավորներին»¹:

Ասուլչեխցին էլ, ահա, լինելով ուշ միջնադարի մեր տաղերգուներից, նույնպես դիմում է այդ այլաբանությանը, որովհետեւ ձևը դուր էր գալիս ընթերցողներին և լսողներին: Ավելացնենք նաև, որ այդ երգերը կարող էին երգվել, և դա նույնպես նպաստում էր այլաբանության ձևի հարատևմանը: Ասուլչեխցու բանաստեղծության մեջ այլաբանության պատկերը պահպանում են միայն վարդն ու սոխակը: Եթե այդ անունները փոխարինենք սոխակը՝ աղաչով, իսկ վարդը՝ աղջիկ բառով, ապա կմնար դուռ սիրաչին մի գողտրիկ տաղ, առանց որևէ այլաբանության:

* * *

Սարգիս Ասուլչեխցու ստեղծագործությունն մյուս բաժինը նրա հոգևոր տաղերն են: Տարօրինակ չէ, ի-

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, էջ 585:

հարկե, որ նրա սիրո ու բնության միանգամայն աշխարհիկ երգերի կողքին առկա են այդ հոգեւոր երգերը՝ նվիրված Մարիամ աստվածածնին, Հիսուսին, Հովհաննես Մկրտչին, Ստեփանոս Նախավկային և այլոց։ Այդ երգերը, չնայած առանձին հաջողված սրտկենդանի ու համեմատությունների, ընդհանուր առմամբ ոչինչ չեն ավելացնում միջնադարյան մեր կրոնական տաղերին և կատարման տեսակետից էլ մեծապես զիջում են հենց իր՝ Ապուլչիսցու սիրո և աշխարհիկ երգերին։ Բանաստեղծի լեզուն այստեղ զգալիորեն չոր է, ծանրաշունչ ու ձանձրալի։

Իբրև տիրացու, եկեղեցու սպասավոր Ապուլչիսցին, անշուշտ, ի պաշտոնն պարտավորված էր զրել հոգեւոր երգեր։ Նա չէր կարող չարձագանքել եկեղեցուն, տուրք չտալ նրա գաղափարախոսությանը։ Այդ երգերում նա պիտի կարողանար կյանքի կոչել ու արդարացնել իր սիրո աշխարհիկ երգերը, ինչպես վերվել են Ապուլչիսցուն նախորդած ու ժամանակակից բանաստեղծները, երևվույթ, որ բնորոշ է մեր միջնադարյան տաղերգուներին տոհմասարակ։

Ապուլչիսցին ևս իր հոգեւոր երգերը ստեղծելիս աշխատել է հավատարիմ մնալ ու հետևել կանոնիկ ձևվերին, փորձել է վերականգնել միջնադարի բանաստեղծական ձևերը։ Այս մոտեցմամբ էլ բանաստեղծը ստիպված է եղել «աղնիւ», «սուրբ» թեմաներին դիմելիս խուսափելու պարզ, անպաճուճ ռճով դրելուց, ժողովրդական կենդանի խոսքի տարրերն օգտագործելու փոխարեն զրելու զրաբար կամ զրաբարախառն հայերենով, աշխատել է հավատարիմ մնալ հոգեւոր բանաստեղծական արվեստի քարացած կանոններին։ Ակնառու է Ապուլչիսցու սիրո և գարնան բանաստեղծությունների ու նրա հոգեւոր երգերի միջև եղած տարբերությունը։

երա կրօնական թեմաներով գրված երգերը թույլ են, անգուշն ու անհուշը:

Եթե սիրո և գարնան երգերում երեան են գալիս պարզ, ժողովրդական լեզուն, ժողովրդականի շունչն ու անմիջականությունը, նմանությունները աշուղական երգերի հետ՝ տաղաչափություն, հանգավորում, կրկրնակներ և այլն, ապա այդպիսիք Ապուլչիսցու հոգևոր երգերում կա՞մ չկան, կա՞մ բռնում են աննշան տեղ: Ապուլչիսցու «Ով սրբուհի, մայր մաղթանաց», «Ըցեալ եմ վիրօք ցաւալի, ցաւալի», «Այսօր արեն այն դգալի», «Աւետիս քեզ, սրբուհի», «Այսօր ցնծասցուք բերկրանօք հաւատացեալք», «Ի յայնմ աւուր հրապարակի», «Եկայք, մանկունք նոր Սիօնի» և «Առաջին օրինաց լրումն յայտնեցար» հոգևոր երգերը գրված են միջնագարջան նույնաբնույթ երգերի հետևութեամբ և ունեն դեղարվեստական աննշան արժեք:

Այդ տաղերից մի քանիսն ունեն բանակապ (ակրոստիքոս): Այսպէս, օրինակ, «Ի յայնմ աւուր հրապարակի յորժամ նստիս ի յատեան» սկզբատողով տաղի բանակապը հոգում է «Ի Սարգսէ է», իսկ «Նախածաման ծառ պտղաբեր» սկզբնատողով տաղի կենտ տողերի սկզբնատառերը հոգում են «Նախավկայն», իսկ վսեգ տողերի սկզբնատողերը՝ «Ի Սարգսէ»: «Առաջին օրինաց լրումն յայտնեցար» սկզբնատողով տաղը գրված է այբբենակարգ:

Ապուլչիսցին առանձին դեպքերում կիրառել է միջնադարում տարածված միևնույն բառով բանաստեղծական տունն սկսելու հնարանքը: Այսպէս են գրված, օրինակ՝ ԺԱ, ԺԳ, ԺԴ և ԺԵ տաղերը: Առաջին տաղի բոլոր տներն սկզբնատողերը սկսվում են «ով սրբուհի», երկրորդինը՝ «այսօր», երրորդինը՝ «աւետիս քեզ» և չորրորդինը՝ դարձյալ «այսօր» բառերով:

Պետք է նկատել, որ այս հանդամանքը եւ խոշոր-

պատել է այդ երգերի գեղարվեստականութեանը, և որոշ
 բանաստեղծութիւններ ստացվել են ինքնանպատակ,
 բռնագրոսիկ և նույնիսկ սխեմատիկ: Տաղերի կառուց-
 ման այս հատկանիշներով հետեւելով իր նախորդներին,
 Ապուլեիսցին միաժամանակ պործածում է նրանց պատ-
 կերներն ու դարձվածքները, որոնք իրենց հերթին
 նույնպէս իջեցնում են նրա հոգևոր հրգերի արժեքը:
 Նման գրեւծէք ոչ այնքան պալիս է նրա տաղանդի
 պակասից, որքան այն բանից, որ, ինչպէս հայտնի է,
 XVII—XVIII դարերի շատ բանաստեղծներ փորձում
 էին վերականգնել միջնադարյան բանաստեղծական
 ձևերը, գրում էին գրաբար կամ գրաբարախառն հայե-
 րենով, պահպանում էին կանոնիկ դարձած ու հնացած
 սկզբունքները, որոնք և հետագայում դարձան կեղծ
 դասական բանաստեղծութեան հիմքը: Մեր կարծիքով,
 ահա, Ապուլեիսցին էլ հետեւել է ժամանակի այս պա-
 հանջներին և իր հոգևոր երգերը գրել ընդհանուր մտայ-
 նութեանն ու գրական ճաշակին համապատասխան: Ար-
 դարացի լինելու համար, սակայն, ասենք, որ Ապու-
 շեիսցին բանաստեղծական իր արվեստի այն լավն ու
 ինքնուրույնը, որ արտահայտել է սիրո և գարնան տա-
 ղերում, փորձել է կիրառել նաև իր հոգևոր տաղերից
 մեկում («Լցեալ եմ վիրօք ցաւալի, ցաւալի»): Տաղը
 նվիրված է Մարիամ աստվածածնին: Բանաստեղծը թո-
 դութիւն է հայցում նրանից իր վիրավոր հոգու մեղ-
 քերի համար: Բովանդակութեան տեսակետից տաղը
 պակաս հետաքրքրական է, ուշագրավ է բանաստեղ-
 ծական տան կառուցման, տաղաչափութեան, աշուղա-
 կան երգարվեստի առանձին հատկանիշների օգտա-
 գործման և լեզվի պարզութեան տեսակետից:

կցեալ իմ վիրօք ցաւալի, ցաւալի,
հոցոտեալ նեախիք թունալի, թունալի,
Համայն անգամօք զազրալի, զազրալի.

Մարիա՛մ,

Ամենօրհնեալ կոյս զովելի,
Դու միշտ բզձալի և փափազելի,
Լի՛, Լի՛, Լի՛, Լի՛ Լի՛ կոյս

(ՓԼ՝)

Դժվար չէ նկատել, որ այս երգը, բանաստեղծական արվեստի իր առանձնահատկություններով, կարելի է դասել Ապուլչիսցու սիրո և գարնան երգերի շարքում: Սակայն ուս Ապուլչիսցու այդ երգերի մեջ եղած այն սակավ լավն է, որ ինչ-որ ինքնուրույնության երանգ է տալիս նրա հոգեւոր երգերին:

Դիմելով աստվածաշնչային թեմաների պատկերմանը, Ապուլչիսցին բնդհանուր առմամբ մնում է շոր ու սխեմատիկ: Իբրև կրոնավոր նա կարող էր գերծ չմնալ աստվածաշնչայինց թե՛ թեմայի բնորոշացն և թե՛ արտահայտած մտքերի առումով: Սակայն իբրև արդեն նոր դարաշրջանի մարդ, նրա կրոնական զգացմունքն այնքան խոր չէ, որ վերածվի ճշմարիտ բանաստեղծության և ունենա անկեղծ հուլականություն: Իրականության մեջ տիրապետում էր աշխարհիկ ոգին, ժողովրդական կենսաշունչ մտախիւները հնչում էին ամենուր, և նա էլ փորձում է համատեղել կրոնական-աստվածաշնչական արշարհիկ-ժողովրդականի հետ: Այստեղից էլ գալիս է նոր ձևը հին բովանդակությունն արտահայտելու համար օգտագործելու նրա փորձը, որի մասին ասացինք վերևում:

* * *

Ապուլչիսցու արվեստի մասին խոսելիս, ամենից առաջ, պետք է նշել այն երկակի ազդեցությունը, որ ըզպացվում է նրա ստեղծագործության բնդհանուր ոգու

և ոճի վրա: Մեկը նրա ստեղծագործության, հատկապես սիրո և գարնան երգերի առնչությունն է ժողովրդական և աշուղական երգարվեստի հետ, իսկ մյուսը՝ հատկապես հոգևոր երգերի մեջ, կապը միջնադարյան տաղերգության հետ: Իհարկե, այդ ազդեցությունները գրեթե միշտ էլ հանդես են գալիս միասնաբար, մի դեպքում՝ մեկի, երկրորդ դեպքում՝ երկրորդի գերակշռությամբ: Այսպես էր առհասարակ XVII—XVIII դարերի մեր բանաստեղծների մոտ, և Ապուլեխցին էլ բացառություն չի կազմում: Նա կանգնած է նույն մակարդակի վրա:

Ինչպես իր նախորդ, այնպես էլ ժամանակակից բանաստեղծների նման, Ապուլեխցին ևս մեծ ուշադրություն է դարձնում բանաստեղծական տան տողաքանակի փոփոխության վրա՝ կապված երգի եղանակի, կրկնականների ու հանգավորման հետ: Նրա երգերում ականառու է այդ դանդաղությունը: Ապուլեխցին ունի 2 և 4—8 տողանոց տներով տաղեր: Դա ցույց է տալիս մի կողմից այն, թե Ապուլեխցին որքան լավ է ծանոթ բանաստեղծական տների կառուցման գաղտնիքներին և, երկրորդ՝ թե որքան ձկուն ու բազմազան են նրա երգերը իրենց կառուցվածքով և հյուսվածքով: Հարուստ և բազմազան է նաև Ապուլեխցու երգերի տաղաչափությունը: Այստեղ ևս նա կանգնած է իր ժամանակի բանաստեղծական արվեստի մակարդակի վրա: Միևնույն տան մեջ նա հաճախ է կիրառում տարբեր չափեր, փոխում վանկերի քանակն ու շեշտերի տեղը, և դրանից նրա երգերը ոչ թե տուժում են, այլ շահում: Ավելացնենք նաև, որ Ապուլեխցին ուշադրություն է դարձնում նաև հանգերի հնչեղությանը: Ծիշտ է, նա դեռևս ունի միահանգ տաղեր, խոսքը սակայն նրա լավագույն գործերի մասին է: Եվ, վերջապես, ուշադրավ են նաև Ապուլեխցու տաղերի կրկնականները: Դրանք ինքնանպա-

առակ չեն, այլ սրուշակի դեր ունեն տաղերի թե՛ մտքի
ընդգծման, տրամադրությունների և հուշյւերի խտաց-
ված արտահայտության և թե՛ երգերի եղանակի դըր-
սեւուման տեսակետից: Հաճախ Ասղուշխսցին փոխում է
մեկ բառ, և կրկնակը ստանում է հնչեղության մի նոր
երանգ: Հիշեցնենք, որ խոսքը նրա լավագոյն գործերի
մասին է: Բերենք միայն մի օրինակ՝ մասամբ ցույց
տալու համար Ասղուշխսցու բանաստեղծական արվես-
տի թվարկած հատկանիշները:

Իմ ձիւնազեղ սպիտակ, ո՛հ, և ազնիւ վարդ կարմրափայլ,

Աւա՛ղ, աւա՛ղ,

Ի գեղեցիկս՝ գեղեցկագոյն և մարդարտափայլ,

Հանդարտաճեմ սէր, իմ, ո՛հ, և գեղեցկագոյն բայլ,

Աւա՛ղ, աւա՛ղ,

Սիրով քոյին սիրահարեալ, ո՛հ, խելագարեցայ:

(Գ)

Ինչպէս տեսնում ենք, բանաստեղծական տունն ունի
վեց տող, տարբեր է, ասենք, առաջին և երկրորդ տո-
ղերի վանկերի քանակը, հանգավորված տողերը ունեն
հնչեղ հանգեր, ձայնարկությունները պատշաճում են
տաղի տխուր ու մեղամաղձիկ տրամադրությանը, հու-
շելով նաև, որ դրանք պետք է կապված լինեն երգի
եղանակի հետ: Եւ, վերջապես, տաղի կրկնակը նույն-
պես խորացնում է երգի միտքն ու հուշյւը: Հաջորդ տան
մեջ կրկնակը, որ էլի 6-րդ տողն է, այսպէս է.

Սըրով սիրոյդ սրահարեալ,

ոհ, վիրաւորեցայ:

Ակներև է կատարված փոփոխությունը, ակներև է
նաև, որ արված է ճաշակով: Ասղուշխսցու լեզուն հատ-
կապես սիրո և գարնան երգերում աչքի է ընկնում իր
հղկվածությամբ, պատկերավորությամբ և մաքրու-
թյամբ: Նրա երգերը երաժշտական են, ավարտված, ու-
նեն եղանակներ, մի քանիսը զրված են չափի խոր

զգացումով, օրինակ՝ «Ուխտք իմ լիցի ոչ զոք սիրել
ազնիւ, բաց ի քէն, ազնիւ», «Հալաւային հողմունքն
հնչեն», «Ծաղկանց զշխոյ և թագուհի» և այլն: Ապու-
շէխըս երգերի, նրա հաջողված գործերի այս հատկա-
նիշներն էլ ցույց են տալիս, որ Ապուշէխցին իսկապես
օժտված է բանաստեղծի ձիրքով ու շնորհքով, որ նրա
ստեղծագործութիւնը ունի իր ինքնուրույնութիւնը:

* * *

Սարգիս Ապուշէխցու ստեղծագործութիւնը մեր ուշ
միջնադարի ուշագրաւ երևույթներից է: Նա նոր և ու-
րույն էջ է ավելացնում այդ շրջանի հայ տաղերգու-
թեանը: Ձուայած Ապուշէխցու կրած ազդեցութիւննե-
րին, նա միաժամանակ ինքնուրույն և ինքնատիպ բա-
նաստեղծ է՝ կապված ինչպես մեր տաղերգութեանը,
այնպես էլ ժողովրդական բանահայտութեանը, աշու-
ղական երգերին: Նա թողել է սիրո և զարնան հուզիչ
տաղեր, որոնք քնարական գողարիկ երգեր են և հա-
լըստացնում են միջնադարյան հայ բանաստեղծութիւ-
նը: Նա իր համեստ, բայց արժանի տեղն ունի ուշ միջ-
նադարի մեր գրականութեան պատմութեան մեջ:

ԲՆԱԳՐԵՐ

ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնագրերը հրատարակության ենք պատրաստել Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 4426 ձեռագրից (ժամանակ՝ 1765, դրիչ՝ Հայրապետ Աղուլեցի, տեղ՝ Աղուլիս)։ Ձեռագիրը տաղարան է և պարունակում է Նաղաշ Հովնաթանի, Հակոբ Նաղաշի և այլ հիդինակների՝ այդ թվում նաև Սարգիս Աղուլեխցու տաղերը։ Ձեռագիրը վերջում ունի նյութերի ցանկ (ձեռագրի, ինչպես նաև նյութերի ցանկի մանրամասն նկարագրությունը տե՛ս «Նաղաշ Հովնաթան, բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 303—311»)։

Սարգիս Աղուլեխցու կապակցությամբ լսենք, որ ցանկում կան նյութեր, ավելի ճիշտ՝ բանաստեղծությունների սկզբնատողեր, որոնց համապատասխան գործերը չեն պահպանվել տաղարանում՝ ձեռագրից թերթեր բնկած լինելու պատճառով։ Այս նույն պատճառով էլ Աղուլեխցու տաղերից կան թերի տաղեր։ Սկզբնատողով հայտնի, բայց տաղարանում չպահպանված գործերի մեջ, կարծում ենք, որ կարող են լինել նաև Աղուլեխցու գործերից։

Տաղերը հրատարակում ենք ըստ թեմատիկ խմբավորման՝ նշանակելով նրանց կարգը ալբուբենի տառերով՝ հայերեն համարակալմամբ. Ա, Բ, Գ, և այլն։ Խոսքերը տալիս ենք տողատակին։ Քննադատաբար ենք մոտեցել ձեռագրի ուղղագրությանը։ Աղուլեխցին ուշ միջնադարի մեր այն գրողներից է, որոնք գրել են ժամանակի համար ընդունված գրական լեզվով՝ օգտա-

գործելով ինչպես գրաբարը, այնպես էլ ժողովրդական բանն ու բանը: Ձեռագրի գրիչը, սակայն, չի հետևում բնորոշված ուղղագրութեանը: Նա խիստ անհետևողական է ուղղագրութեան հարցում: Նա գիտակցաբար հետևում է միայն հնչման և գրութեան մասնակի համապատասխանությանը՝ ելնելով իր մայրենի բարբառի իրողութիւնից: Հայրապետը գրագիտութեան բարձր մակարդակ չունի: Նա թույլ է տվել բաղմամբիվ վրիպակներ, միեւնոյն բառի գրութեան մի քանի ձևեր, շեղումներ, սխալներ: Այս իսկ պատճառով էլ մի քանի բառերի իմաստ մեղ համար մնացել է թեական: Բնագրերը պատրաստելիս բոլոր այն դեպքերում, երբ կարծում ենք նկատված շեղումները ոչ թե հեղինակինն են, այլ գրչինը, տալիս ենք տողատակին՝ իբրև այլընթերցւած: Ազատ ենք վարվել դադաճականի և վանկարար ը ձայնավորի գրութեան հետ, պահպանել ենք առանձին դեպքերում: Նկատված վրիպակները երբեմն տվել ենք փակագծերի մեջ, մյուս դեպքերում՝ տողատակին:

Ստորև տալիս ենք Ապուլեյիցու տաղերի ցանկը՝ ըստ մեր դասավորութեան և սկզբնատողերի, նշելով ձեռագրի էջերը:

Ա. Ի բոլոր կեանս իմ բաց ի քէն, ով իմ ցաւոցս	
Բ. Գեղեցկափայլ և նազելի	էջ 75տ—75ր
փարատիչ	» 96տ—96ր
Գ. Այն նազելի սէր իմ, ոհ, իսկոյն չինէն	
հեռացաւ	» 109տ—109ր
Դ. Ուխտք իմ լիցի ոչ զսք սիրել տղնիւ,	
բաց ի քէն տղնիւ.	» 109ր—110տ
Ե. Հրով սիրոյդ, ով իմ տղնիւ	» 94ր—95ր
Զ. Ահա էհաս տղնիւ գարուն	» 94տ—94ր
է. Հարտաւային հողմունքն հնչեն	» 92ր
Ը. Գարնան օրերն եկեալ հասին	» 92ր—93տ
Թ. Մաղկանց զշոտչ և թաղուհի	» 65ր—66տ

Ժ. Նախաժաման ծառ սլաղարեր	էջ	26տ
ԺԱ. Ով սրբուհի, մայր մաղթանաց	»	62տ—63ր
ԺԲ. Լցեալ եմ վիրօք ցաւալի, ցաւալի	»	72տ—72ր
ԺԳ. Այսօր արեւն այն զգալի	»	61տ—61ր
ԺԴ. Աւետիս քեզ, սրբուհի	»	66ր—67տ
ԺԵ. Այսօր ցնծասցուք բերկրանօք Հաւատացեալք	»	60տ—61ր
ԺԶ. Ի յայնմ առաք Հրապարակի յորժամ նստիս ի յատեան	»	90ր—92տ
ԺԷ. Եկայք մանկունք նոր Սիօնի	»	105տ—106ր
ԺԸ. Առաջին օրինաց լրումն յայտնեցար	»	64տ—65տ:

Ա.

- Ի բոլոր կեսնս իմ բաց ի քէն, ուլ իմ ցաւոցս
 Իհարատիւ,
 Չունիմ զայլ ոք ինձ ցաւակից և ոք զոք
 մխիթարիչ,
 Եւ դու յինէն ի բաց շրջիս, նեղութեանս իմ
 անդորրիչ,
 Երկնչիմ, թէ զուցէ արդեօք անցեալ եմ իմ
 նազելոյս,
 5 Ձիս՝ զեղկելիս և զողբալիս, անցեալ եմ իմ
 սիրելոյս:
 Սիրոյդ թռչնակն աւետաբեր ի ներ սրտիս
 թառեցաւ,
 Լըրսով քոյին ուրախառիթ սաստիկ հուրն իմ
 սառեցաւ,
 Բայց կարօտով տեսոյդ քոյին դարձեալ իսկոյն
 վառեցաւ,
 Երկնչիմ, թէ զուցէ արդեօք անցեալ եմ իմ
 նազելոյս,

Խորագիր. Տաղ սիրոյ Ակնեցի Սարգիսէ զարմարել. «Այնք
 էնդլիմ զարդանընդայ» ձայն է:

Զեազբում

- | | |
|-----------------------|--------------------|
| 1 ցաւոցս | 5 զխրալիս |
| 2 ցաւակից | 6 թռչնակն ավետաբեր |
| 3 շրջիս, անթարրիչ | 8 զարցեալ իսկոյն |
| 4 Այստեղ և նետ արդեօք | |

10 Զիս՝ զեղկելիս և զողբալիս, անցեալ եմ իմ
սիրելոյս:

Առաւօտեան մէդիկ օդով ընդ շրջիլն իմ ի
սարտէզ,

Բերեալ մատուցին եղկելոյս ըզսիրալիւր քո
քարտէզ,

Ի ձեռն քում ըստգտանաց հառաչեցի ի սրտէս,
Երկնչիմ, թէ գուցէ արդեօք անցեալ եմ իմ
նազելոյս,

15 Զիս՝ զեղկելիս և զողբալիս, անցեալ եմ իմ
սիրելոյս:

Բախացուցիչ արտմեցելոյ բոլոր անձին եղկելոյս,
Հըրով սիրոյդ այրեցելոյ և կարօտիս լցելոյս,
Ոչ իսկ խզձառ և ոչ երբեք սիրոյդ ցաւով նեղելոյս,
Երկնչիմ, թէ գուցէ արդեօք անցեալ եմ իմ
նազելոյս,

20 Զիս՝ զեղկելիս և զողբալիս, անցեալ եմ իմ
սիրելոյս:

Պահար վարդի որակութեամբ ի սարտէզն իմ
փայլեցար,

Նախապէս զինե փարելով՝ արդէն ի բաց վարեցար,
Ոչ գիտեմ, թէ որո՞ւմ արդեօք չարախօսի չարեցար,
Երկնչիմ, թէ գուցէ արդեօք անցեալ եմ իմ
նազելոյս:

10 զողբալիս

11 առավոտեան

12 քոյ

13 հառաչեցի

14 Այստեղ և Եւստ՝ անցեալ եմ

15 զերկնչիմ և զսիրելիս

16 բախացուցիչ

17 կարտիվ

18 երբեկ, ցավով

20 գոխբալիս

21 վարկի, սարտէզ

22 նախապէս

23 չարախօսի

25 Զիս՝ զեղկեկիս և զողբալիս, անցեալ եմ իմ
սիրելոյս:

Ի ծառայս քո անմխիթար ի բանդի հիւանդութեան,
Սպասելով քում զհիշեցիկ և քաղցրագին
տեսութեան...*

25 զոխբալիս

27 զսղցրագին

26 բռլ. հիվանդութեան

* Այստեղ տալն ընդհատվում է՝ թերթ ընկած լինելու պատճառով: Պակասում է մեկ թերթ՝ ըստ ձեռագրի էջակալման ՄԺէ թերթի: Եթե տալի բանակապը հոգել է, «Ի Սարգիսէ», ապա պակասել է 13 տող, իսկ եթե «Ի Սարգիսէ է», ապա՝ 18 տող:

- Գեղեցկափայլ և նազելի,
 Եւ իմ սլայծառ ջինջ հայելի,
 Աներկբայ սիրով սիրելի.
 Սիրոյս զատուեցայ,
 5 Զոր արարի,
 Ե՞ս արարի,
 Արբեալ զբտուեցայ:
- Երջանկադոյն և հարազատ,
 Ազնուազգի և սլայազատ,
 10 Ի մէջ յերկրի և համեմատ.
 Սիրոյս մերժեցայ,
 Զոր արարի,
 Ե՞ս արարի,
 Խեղազարեցայ:
- 15 Ղամսար սրտի իմ լուսաւիր,
 Եւ իմ հոգոյս միշտ կենաձիր,

Խորագիր. *Տաղ ի վերայ սիրոյ. գոյն է՝ «Երբ աշրամդան ազ-
 սուր մալում, աման, աման», ի տիրացու Սարգիսէ ասացեալ:*

Ձեռագրում

- | | |
|-------------------------|------------------------------|
| 1 զգեցկափայլ | 14 Այստեղ և հետո՝ խելաշարեցա |
| 4 զազվէցայ | 15 լոյսալիր |
| 7 Այստեղ և հետո՝ արտեալ | 16 հորոյս, կենացիր |
| 9 Բաշազատ | |

Գեղատեսակ, յարմարածիր,
 Սիրոյս զատուեցայ,
 Զոր արարի,
 Ե՛ս արարի,
 Արբեալ զըտուեցայ:

Եղակի սէրն իմ յարատե,
 Որ մշտափայլիւր շուրջ զինե,
 Գեղասպատար և բարեձե,
 Սիրոյս մերժեցայ,
 Զոր արարի,
 Ե՛ս արարի,
 Խեղաբարեցայ:

Յնծութիւն հոգոյս ժամեժամ,
 Ի բաց մեկնեալ խիստ տարածամ,
 Եւ բերկրութիւն իմ յարածամ,
 Սիրոյս զատուեցայ,
 Զոր արարի,
 Ե՛ս արարի,
 Արբեալ զըտուեցայ:

Ի գերանձուռ խընդութենէ,
 Եւ սիրապիրկ պնդութենէ,
 Իմ յարակից ցընծութենէ,
 Սիրոյս մերժեցայ,

17 գեղոյտեսակ, յարմարածիր

18 զատուեցայ

21 զըտուեցայ

23 զինեզ

24 գեղասպատար և բարեձե

29 հոգոյս

31 յարածամ

32 զատուեցայ

35 զմեցայ

38 ցընծութենէ

Զոր տրարի,
 Ե՞ս տրարի,
 Խեղագարեցա՛յ:

Կարմրափաշլ վարդ տննման,
 Գեղեցկատիպ և սիրական,
 Յարտափաշլ զունով դանազան,
 Սիրոյս զատուկեցա՛յ,
 Զոր տրարի,
 Ե՞ս տրարի,
 Սրբեալ զրատուկեցա՛յ:

3 Կարմրափաշլ վառք

4 Գեղեցկատիպ

46 զատուկեցա՛յ

49 զրատուկեցա՛յ

Այն նազելի սէր իմ, ո՛հ, իսկոյն յինէն հեռացաւ,
Աւա՛ղ, աւա՛ղ,

Ոչ դիտեմ, թէ որո՞ւմ արդեօք սիրով վառեցաւ
Ի բաց թողեալ զգերիս, ո՛հ, օտար սիրոյ յարեցաւ,
5 Աւա՛ղ, աւա՛ղ,

Սիրով նսրին սիրահարեալ, ո՛հ, խեղագարեցայ:

Ով իմ պայծառատիպ, ո՛հ, ջինջ և մաքուր հայելի.
Աւա՛ղ, աւա՛ղ,

Քան զամենայն գերազանցեալ, ո՛հ, բիրոց
ցանկալի,,

10 Որքան ի քէն մերժեցայ, ո՛հ, եղէ եղկելի,
Աւա՛ղ, աւա՛ղ,

Սիրով սրոյդ սրահարեալ, ո՛հ, վիրաւորեցայ:

Իմ ձիւնագեղ սպիտակ, ո՛հ, եւ աղնիւ վարդ
կարմրափայլ,
Աւա՛ղ, աւա՛ղ,

Խորագիր. Տաղ ի վերայ սիրոյ՝ տիրացու Սարգիսէ առաջեալ.
դոյն է՝

«Բիր Լալանջի քաւրայ դօրմադը քարին ամա՛ն, ամա՛ն»:

Ձեռագրում

3 արթեօք

9 ցանգալի

6 Այստեղ և հետո՝ խեղագարեցայ 10 եղէ եղկելի, ո՛հ.

7 պայծառատիպ

13 վարթ կարմրափայլ

15 Ի գեղեցիկս՝ գեղեցկագոյն և մարդարտաւիայլ,
 Հանդարտաճեմ սէր իմ, ս՛հ, և գեղեցկագոյն քայլ,
 Աւա՛ղ, աւա՛ղ,
 Սիրով քոյին սիրահարեալ, ս՛հ, խելագարեցալ:

Իմ սիրուն սիրասուն, ս՛հ, ե՛կ բնդ միմեանս
 հաշտեսցուք.

20 Աւա՛ղ, աւա՛ղ,
 Եւ գնախկին դաշնադրութիւն, ս՛հ, մի
 վերջադրեսցուք,
 Եւր ի նորոյ սկսեալ, ս՛հ, նոր իսկ
 հաստատեսցուք,

Աւա՛ղ, աւա՛ղ,
 Սրբով սիրոյդ սրահարեալ, ս՛հ, վիրաւորեցալ:

15 գեղեցկագոյն և մարդարտա-
 վիայլ

16 գեղեցկագոյն
 21 գնախկին դաշնադրութիւն

Ուխտք իմ լիցի ոչ զոք սիրել, ազնիւ՛, բայց ի
 քէն, զազնիւ՛,
 Թէ կարելի լինէր առջի վկէս հողոյս ի քո՛ սլատիւ,
 ի սլատիւ,
 Զի թէպէտ շատ ազնիւ տեսի, բայց քան զքեզ զոք
 իմով սրտիւ,
 Ե՛կ ընդ քեզ դաշինս արասցուք՝ կամ նորա՛ լեր և
 կամ ի՛մ, սէր իմ:

5 Վասն է՛ր յինէն ի բայ շրջիս և ընդ ալուս
 համակցիս,
 Զիս ի՞նչ տեսեր յինէն զչարիս, սրով ի բայ իսկ
 վարիս, իսկ վարիս,
 Եւ փոխանակ իմ բարութեանց հատուցանես
 զչարիս,
 Ե՛կ ընդ միմեանսս դաշնադրեսցուք՝ կամ ի՛մ լեր և
 կամ նորա՛, սէր իմ:

Խորագիր. Տաղ ի վերայ սիրո՛ տիրացու Սարգիսէ ասացեալ.
 դոյն է՝ «Ահալմ օլսն սարմայալիմ»:

Ձեռագրում

2 Կորոյս

4 Այստեղ և հետո՝ նորայ, լէր

5 շրջիս

8 դաշնայդրեսցուք

Փափագանօք տեսեալ քոյին շրջադայիմ լալագին,

10 Տրխրտսիրեալ որպէս զբու յաւերակում բնակողին,
բնակողին,

Ճիւ բառնալով աղաղակեմ, իբր զճննողուն
տանխսին,

ե՛կ բնդ քեզ զաշինս արասցուք՝ կամ նորա՝ լեր և
կամ ի՛մ, սէք իմ:

Եթէ դարձեալ ոչ միանաս, ընդ խղճալոյս
չարանաս,

Խնդրեմ իսկոյն բոլոր սրտիւ՝ ոչ շարաշար
մահանաս, մահանաս,

15 Ի ներ տիրոջ ծողկականում և ոչ երբեք հնանաս.

ե՛կ բնդ միմեանս գաշնադրեսցուք՝ կամ ի՛մ լեր
և կամ նորա՝, սէք իմ:

9 փափականօք շրջադայիմ

լալագին

13 դարցեալ

14 սրտիւ, շարաշար

16 միմեանս գաշնադրեսցուք

Հրավ սիրոյդ, ով իմ ազնիւ,
Տարակ աչրիմ և տաշտրիմ,
Նովին տառամբ գերի վարիմ.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
5 Արի՛ ընկալ զծառայդ:

Որ թէ ի բաց վանես զգերիս,
Մով ու մառախուղ պատեն ցիս,
Վաչրի գազանք զիշատեն զիս.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
10 Արի՛ ընկալ զգերիս:

Ի իծեալ գերիս ասպնջական,
Քո ծառայն ևմ պատրաստական,
Սիրովդ եղեալ տարազրական.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
15 Արի՛ ընկալ զծառայդ:

Խորագիր. Տաղ Աղբնցի գուղն Ապուջեղցի տիրացու Սարգիսէ
զարկարեալ վրան սիրոյ. «Իր աղչամդան աղտուր մալում աման,
աման» գոյն է:

Ձեռագրում

! ով իմ ազնիւ
* մառախուտ
Ս ընկալ

11 ասպնջական
12 Այստեղ և հետո՝ քոյ

20 Ռոտեալ խըղճուկ և ցաւալի,
 Սըրոյվ սիրոյդ յոյժ վիրաւի,
 Մնամ տեսեանք քո բարեւի.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 Արի՛ ընկալ զգերիս:

25 Վասն տեսեան սիրոյդ ազնիւ,
 Յարատե մեծաւ կարօտիւ,
 Շրջաբերիմ գիշեր և տիւ.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 Արի՛ ընկալ զծառայդ:

30 Առանց տեսոյդ քո քաղցրագին,
 Բոլոր անձամբ միշտ ցաւագին,
 Մոլորեալ շրջիմ լալագին.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 Արի՛ ընկալ զծառայդ: *

35 Ռահիւ սիրոյդ, ով իմ ընտիր,
 Հետեալ շրջիմ անխնդիր,
 Յարատեակ ի քոյդ խնդիր.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 Արի՛ ընկալ զգերիս:

16 ցաւալի

27 ցաւակին

17 յոյժ

28 շրջիմ

22 մեծաւ կարօտի

31 ով իմ ընտիր

23 շրջաբերիմ

* Թվում է՝ գրիչը շփոխեամբ խախտել է կարգը. այս բառի փոխարեն պէտք է լինի՝ զգերիս, իսկ հետո մշտաւ անկրօն՝ ընդհանրապէս:

ևթէ մահու իսկ հասանիմ՝
 Կամու ի բաց ոչ լքանիմ,
 Այլ քո փոխան տամ՝ զհոգի իմ.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 40 Արի՛ ընկալ զծառայդ:

Առանց ծագման քո տրեւն՝
 Այ ի բուն եմ և ոչ արթուն,
 Տառանկալ շուրջ դամ՝ երերուն.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 45 Արի՛ ընկալ զգերիս:

Լալի եմ միշտ և խղճալի,
 Մեծագոյն վշտօր ցաւալի,
 Թարց նազելոյդ եմ հղկելի.
 Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
 50 Արի՛ ընկալ զծառայդ:

37 Կամալ

33 արի

47 մեծագոյն, ցաւալի

50 ընկալ

Ահա էհաս աղնիւ գարուն,
 նորեցաւ հզանակ տարոյն,
 նոր ի նորոյ առատեցան՝
 Ծնունդ խաշանց և գառնեբուն:

5 Հալեցան ձիւնքըն սարերուն,
 Յորդորեցան ջուրքըն ձորերուն,
 Հոտաբոյր ծաղկամբ գոյնղոյն՝
 Հովիտք և դաշտք են զարդարուն:

10 Ամենայն լերինք փայլեցան,
 Բլուրք, բարձունք այլալեցան,
 Կանանչացան բոլոր այգիք
 Եւ սլարախղունք բարեբերուն:

15 Գարնան զուշակ հաւերն աղնիւ,
 Համեղագոյն իրեանց ձաշնիւ,
 Ուրախութեամբ երգակցելով՝
 Յերկրի մերում են երեսմ:

Խորագիր. Տաղ Ակնեցի Ապուշեղց(ի) տիրոջու Սարբիսէ գար-
 թարեալ ի վերայ գառնան. սլար զալոյ գոյն է:

Ձեռագրում

1 ահա էհաս

2 յորդորեցան

3 հոտաբոյր

8 դաշ(տ)ք են զարթարուն

12 բարեբերուն

13 հովերն

14 համեղագոյն

16 երկրում

20 Աղնիւ թռչնակն աչն ցտնկալի,
 Քաղցրանուազն և բերկրալի,
 Ի թոսիս վարդին առ նստելի՝
 Եղանակեաց ընդ իւր պարուն:

Բամից ծաղկանց տուք աւետիս,
 Վասն լրման ժամանակիս,
 Զի հալեցան ձիւնքըն լերանց՝
 Արիք, ելեք ի հողերուն:

25 Ով մանուշակ և նունուֆար,
 Միմեանց հանգոյն և հաւասար,
 Անուշահա բարուք ձերովք՝
 Բացուեցարուք սիրազարուն:

30 Ի իծեալ բնութեանս ցաւագին,
 Առողջարարք ազնուագին,
 Ով անթառամ և բալասան՝
 Հանգոյն լուսնոյ և արեւուն:

35 Նմա միշտ փառք և գոհութիւն,
 Որ սպարգեւեաց զուրախութիւն,
 Բացմամբ վարդից և շուշանաց՝
 Զտիեկերս տրար բերկրուն:

17 սգնիւ, ցտնկալի

27 անուշակոտ

33 նմա:

19 վարժին

28 սիրաչղարուն

34 պարբեկեաց

21 տվետիս

29 ցաղագին

35 վարժից

25 նոնալֆար

30 առողջարարք ազնուագին

26 միմեանց, համա-

32 ցանգոյն լուսնոյ

ար

Հարաւային հողմունքն հնչեն՝ զբոլոր բնութիւնս
 զարդարեցին,
 Գարնան զուշակ թռչունքն եկեալ՝ զլսելիս
 հիացուցին,
 Բայր տմենայն րնդ բուն տնկոյ՝ զկոկոսն
 իւրեանց արձակեցին,
 Ի չարմատոց բողբոջեցեալ՝ զհամայն տերևս
 իւրեանց բացին:

5. Բոլոր ծաղկունքն արտաշնդեալ՝ զզօրութիւնս
 իւրեանց ցուցին,
 Բուրմամբ հոտոց անուշութեան՝ զհամայն
 բնութիւնս մայլեցուցին,
 Նախ մանուշակն կտտտագոյն՝ րնդ նոնոֆրին
 շողալիայլին,
 Եւ ոչ ծաղկունքն զհետ միմեանց՝ ի սղարտիպանս
 բերկրաբուրին:

Խորագիր. Տաղ ի վերալ գտնան՝ Ակոյնս զուգին Ապրիլիցի տի-
 րացոյ Սարբիսէ ասացեալ:

Զեկագրում

- | | |
|------------------------------|-------------------------|
| 1 Հարաւային, զարմարեցին | 5 զբոլորութիւնս |
| 3 տնկոյ, արշակեցին | 7 շողալիայլին |
| 4 բողբոջեցեալ, իւրանց, տերևս | 8 միմեանց, բերկրաբուրին |

Ի կէտ գարնան եղանակին՝ երեսք դաշտաց

այլազանին,

10 Լերանց, ճովտանց և պարտիզանց՝ բողբոջքն
յարտաքս ելուզունին:

9 կետ

10 չարտակս

Գարնան օրերն եկեալ հասին*,
 Բերկրեալ ցնծան այսմ մասին,
 Լերինք, բլուրք և բուրաստանք,
 Ընդ սուրբ տառից որպէս ասին

5 Ահա կոկոնքն ցըցվեցան,
 Եւ օր ըստ օրէ լըցվեցան,
 Նուշն ծիրանոյն բացվեցան,
 Եւ այլ բաղումք ի միասին:

10 Բախճանական եղանակին,
 Իսկոյն յայտնին ի պարտիզին
 Բոլոր ծաղկունքն ընդ վարդենոյն,
 Եւ տասրակաց ձայնքըն լսին:

Որով ցնծան որդիք մարդկան,
 Պայծառ դիմօք ուրախական,
 15 Պարունակեալ ստուարասանդօր
 Ընդ փթթեալ ծառոց, որ անդ հիւսին:

Խորագիր. Տաղ գանձան ի նոյնոյ:

Ձեռագրում

2 բե(ր)կրեալ ցնծան

13 ցնծան որդիկ մարմկան

5 ահայ կոկոնէկն

15 պարունհաբեալ

11 վարմենոյն

* Այս տաղը, ըստ Լուվյան, խորագրված է երկու անգամ: Առաջին խորագիրն է՝ «Տաղ ի վերայ գարնան, Ապուշեղցի տիրացու Սարգիսի ասացեալ» (ձեռ. էջ 92բ, վերջում), երկրորդ խորագիրը՝ վերինը (ձեռ. էջ 93ա, սկզբում):

՚ի իւսեալ ծաղկօք զարդարեցան
Հովիտք և դաշտք զարմանազան,
Եւ բուրմոնք հոտոց անմահութեան
Ի քիմս մարդկան հարահոսին:

20 Նոր ի նորոյ նորեցան,
Բոլոր երկիրս և լրացան,
Բիւր բարութիւքն առատրեցան
Խնամոց տեառն և ոչ կասին:

17 ծաղկոկ զարթարեցան

18 հովիտք փյւ հովիտք

19 անմայութեան

20 մարթկան հարայհոսին

Պիւլպիւլն ասէ.

Ծաղկանց դշտոյ և թագուհի,
Երանի այնմ, որ զքեզ ունի,
Վառեալ գունով կարմրափայլիւ,
5 Բիւր գովութեանց էս արժանի:

Վարդն ասէ.

Աղնիւ թռչնակ և պատուական,
Գեղեցկախօս և քաղցրաձայն,
Որքան գովեմ գովելի էս՝
10 Ի ներ թռչնոց անդուգական:

Պիւլպիւլն ասէ.

Սիրով քոյին միշտ տատանեալ,
Աստ և անդ եմ շրջաբերեալ,
Տիւ և գիշեր ոչ դադարիմ՝
15 Եւ ոչ այլ ինչ մտաբերեալ:

Խորագիր. Տաղ ի վերայ խոսակցութեան վարթին և սլլրուին, որ
Ակրնայ դուղէն Ապուշեղցի տի(ր)ացու Սարգիսէ ասացեալ:

Ձևագրում

1 պիւլպուլն ասէ՝ շփոր-
մամբ կրկնված

2 զբշկոյ և թագուհի

3 այմն

6 Այստեղ և հետո՝ վարին

7 գեղեցկախօս և քաղցրաձայն

11 պիւլպուլն

13 շրջաբերեալ

15 մտաբերեալ

Վարդն ասէ.

- Վասն է՞ր աշդբան բառնաս կական,
Ու վ գերագնիւ և սիրական,
Զի քան զքեզ սիրով իմով,
20 Զունիմ զայլ ոք ասպնջական:

Պիւղպիւն ասէ.

- Սիրահարեալ սխրով քոյին՝
Երգաբանեմ ողորմագին,
Զունիմ երբեք կալ և զաղար,
25 Կարօտիւ քո միշտ լալագին:

Վարդն ասէ.

- Եթէ զքո փարեւին խնդրես,
Յարակ շրջիս և որոնես,
Ի ներ բուսոյս պայծառացեալ՝
30 Որպէս զարփին եկեալ զըտցես:

Պիւղպիւն ասէ.

- Որ վաւետեաց ձայն քո լուայ,
Բերկրեալ իսկոյն զուարճացայ,
Այլ զի՞նչ կամիմ աշտուհետե,
35 Բոլոր անձամբ ուրախացայ:

Վարդն ասէ.

- Եթե սիրով վառեալ վառիս,
Ոչ զաղարիս և ոչ թառիս,
Եկ և տես զիս ի տարտիւղումս,
40 Որով իսկոյն մըխիթարիս:

19 սիրով
21 պիւղպիւն
23 ողորմագին
24 երբեք

25 կարօտիւ
29 բոստա
31 պիւղպիւն
32 զավետեաց

Նախաժաման ծառ պտղաբեր,
Ի ներ անկոց պարտիկիս մեր,
Աղաչանօք քո կենսաբեր,
Սգոյս իմոյ փարատիչ լեր:

5 Խորիսիս նորոյս հասաւտութեան,
Առադրեցար ի յրեկոյս,
Առաւել քան զՄովսիսեան,
Բամեալ խրդանցս օժանդակ լեր:

Վրիպելոյս ի բուն շնորհաց,
10 Գերոյս ի ձեռն յանցանաց,
Կամ(ւ)ին հետեւելոյ ի բաց,
Ստրուկ զսրբիս ալցելու լեր:

Ապա թէ ոչ իսկ մեռանիմ,
Եւ ի կենաց և բաժանիմ,
15 Յամենայնէ զուրկ պատնիմ,
Էին շնորհիւ ինձ գթող լեր:

Խորագիր. Յորթորակի գոյն է:

Ձեռագրում

1 նախաժաման, պտղաբեր	7 տառվել, զՄովսիսեան
2 ներ անկոց	11 հետեւելոյ ի բաց
3 քոյ կենսաբեր	13 յաղաց
4 սրոյս, ալաւել և հետո՝ լեր	15 յամենայնէ
6 տառվորեցար, յրեկոյս	16 էլին

նմայ միշտ փառք և գոհութիւն,
 Բարի բնութեան օրհնելագողին,
 Առանց նորա չիք օգնութիւն,
 20 Ամենայնում նուագող լեր: *

17 նմայ

19 նորայ

18 բնութեանն

20 նուագող

* Այս տողից հետո կա ևս երկու տող, որոնք ուրիշ տաղից են.

Ո՛վ անձն իմ գերի, ի բարեաց թերի,
 Քանի դեգերեալ մնաս երերի:

ԺԱ.

Ո՛վ սրբուհի, մա՛յր մաղթանաց,
Նաև զմայր պաղատանաց,
Մաղթեա՛ վասն իմ տեառն փառաց,
Երանեալ կոյս և գերանբիծ լոյս:

5 Ո՛վ սրբուհի, մա՛յր զթութեանց,
Նաև մայր ողորմութեանց,
Լե՛ր բարեխօս տեառն տէրանց,
Անարատ կոյս և գերազնիւ լոյս:

Ո՛վ սրբուհի, մա՛յր բարձրելոյն,
Յաթոռ ընդ հօր բազմելոյն,
10 Բարեխօսեա՛ քո սուրբ որդւոյն,
Երանեալ կոյս և գերանբիծ լոյս:

Ո՛վ սրբուհի, մա՛յր գեղեցիկ,
Եւ երջանկաց երջանիկ,
15 Մաղթե՛ա վասն իմ որդւոյդ քաղցրիկ,
Անարատ կոյս և գերազնիւ լոյս:

Խորագիր. Տաղ սուրբ աստուածածնայ ի վերայ զժամանք՝ Ակ-
նեցի գուղէն Ապուշեղցի տիրացու Սարգիսէ ասացեալ:

Ձեռագրում

- | | |
|--------------------------------|----------------------------|
| 1 Այստեղ և հետո՝ սրբուհի, մախ- | 7 Այստեղ և հետո՝ լի |
| թանաց | 7 բարկխոս |
| 2 նայ և | 10 հօր, այստեղ և հետո՝ քոյ |
| 3 մախթեայ | 11 բարկխոսեայ |
| 6 նայև | 15 մախթեայ, որդւով |

20

Ո՞վ սրբուհի, աթո՞ռ բանին,
Տեղի փառաց անեղին,
Լե՛ր բարեխօս քո միածնին,
Երանեալ կոյս և գերանբիծ լոյս:

25

Ո՞վ սրբուհի, մա՛յր երանեալ,
Գովեալ և բարեբանեալ,
Լե՛ր ինձ միջնորդ ընդ որդւոյդ օրհնեալ,
Երանեալ կոյս և գերազնիւ լոյս:

Ո՞վ սրբուհի, մա՛յր հրաշալի,
Եւ հրեղինաց բաղձալի,
Լե՛ր միջնորդ որդւոյդ ըղձալի,
Երանեալ կոյս և գերանբիծ լոյս:

9 բարեխօս
20 գերամբիծ

26 հրեղինաց
28 գերամբիծ

Լցեալ եմ վիրօք ցաւալի,³ ցաւալի,
 Խոցոտեալ նեախօթ թունալի, թունալի,
 Համայն անդամօք զազրալի, զազրալի.

Մարիամ,

5 Ամէնօրհնեալ կոյս գովելի,
 Դու միշտ ըղձալի և փափագելի,
 Լի՛, Լի՛, Լի՛, Լի՛, Լի՛ կոյս:

Յաւակից Լ(ի)նիլ եղկելոյս, եղկելոյս,
 Օգնել յարաժամ անկելոյս, անկելոյս,
 10 Լո՛ւր խնդրոյ ի բաց լքելոյս, լքելոյս,
 Մարիամ,

Ամէնօրհնեալ կոյս գովելի,
 Դու միշտ ցանկալի և երանելի,
 Լի՛, Լի՛, Լի՛, Լի՛, Լի՛ կոյս:

Խորագիր. Տաղ Հոբոյ Սարգիսի զարթարեալ՝ ազաւանք սրբոյ
 կոյսին Մարիամու

Ձեռագրում

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1 վիրօք ցաւալի | 8 ցաւակից |
| 4 Այստեղ և հետո՝ Մարիամ | 9 յարաժամ |
| 6 Այստեղ և հետո՝ փափակելի | 13 Այստեղ և հետո՝ ցանգալի |

³ Այս բառից հետո գրիչն ունի նշում, «կրկնէ»:

15 Եթէ ոչ գթով օգնիցես, օգնիցես,
 Զընկղմեալս անդրէն կանգնիցես, կանգնիցես,
 Միածինս որդոյդ յանձնիցես, յանձնիցես,
 Մարիամ,

Ամէնօրհնեալ կոյս գովելի,
 20 Դու միշտ ըղձալի և փափագելի,
 Լի՛, լի՛, լի՛, լի՛, լի՛ կոյս:

Արի մայր, սուրբ և միշտ բարի, միշտ բարի,
 Ի խնդիր գերոյ տկարի, տկարի,
 Ոհ և մի սույր ալլոց յաւարի, յաւարի,
 25 Մարիամ,

Ամէնօրհնեալ կոյս գովելի,
 Ով դու* ցանկալի և երանելի,
 Լի՛, լի՛, լի՛, լի՛, լի՛ կոյս:

Լամ և ողբամ զզանազան,** զզանազան,
 30 Զլեռնակոյտ մեղս իմ բաղմազան, բաղմազան,
 Ոհ մօրդ երջա(ն)կի և սրբազան, սրբազան,
 Մարիամ,

Ամէնօրհնեալ կոյս գովելի,
 Դու միշտ ըղձալի և փափագելի,
 35 Լի՛, լի՛, լի՛ լի՛, լի՛ կոյս:

22 յարի

30 զլեռնակոյտ

24 յավարի

31 մօրդ երջակի

29 սիրամ

* «Ով դու» բառերի փոխարեն կարծում ենք պետք է լինի «դու
 լիշտ», ինչպէս երկրորդ տան մեջ:

** Այս բառից նետո գրիչն ունի նշում՝ «կրկնէ»:

ԺԳ

Այսօր արեն այն ըզգալի,
Որ ծագեցաւ գեղեցկապէս,
Լուսաղարդեալ պայծառացոյց՝
Զհամայն բնութիւնս վայելչապէս:

5 Այսօր անմայր ծնունդն հօր,
Անհայր ծնաւ արդարապէս,
Եկեալ յերկիր մերով բնութեամբ՝
Երեւցաւ ճշմարտապէս:

10 Այսօր անդրանիկն հայրական,
Մնաւ մարմնով գերադրական,
Որով լրումն ըստուերական՝
Պայծառացաւ անճառապէս:

Այսօր բնութիւնն աստուածեղէն,
Խառն ընդ բնութեանս մարդկեղէն,
15 Եկեալ կերպիւ հողեղինի՝
Տնօրինեցաւ յարմարապէս:

Խորագիր. Տաղ ի վերայ ծննդեան Յիսուսի՝ տիրացու Սարգիսէ ասացեալ

Ձեռագրում

2 ծաքեցաւ գեղեցկապէս	8 Երեւեցաւ ճշմարտապէս
3 լուսաղարթեալ պայծառացոյց	10 ծնաւ
4 վայելչապէս	15 կերպիւ
5 հօր	
6 արթարապէս	

Այսօր լրումն հին օրինաց,
Զոր նախապէս օրինադրեաց,
Անճառելի մարդեղութեամբ
20 Անդրափոխեաց զօրեղապէս:

Այսօր անմարմինն ի մարմնի,
Երեւցաւ ի մէջ երկրի,
Սեղմեալն յարգանդ մայրականի,
Հօր հաճութեամբ էնն իսկապէս:

25 Այսօր անծինըն ծնանի,
Եւ բանն աստուած մարդ եղանի,
Յերկուց բնութեանց միաւորեալ՝
Մի բնութիւնն անշփոթելի:

20 զօրեղապէս

22 երեւցալ

23 յարքարդ

24 Զոր հաշութեամբ, իսկապէս

27 միավորեալ

ԺԳ

Աւետի՛ս քեզ, սրբուհի՛,
Դուստր Դաւիթ արքայի,
Հոգին սուրբ ի քեզ իջեալ՝
Արդարեայ տուն և տեղի.

5 Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս,
Եւ առաքաւստ անեղի:

Աւետի՛ս քեզ, տիրուհի՛,
Բարձող երկանցն Եւայի,
Ի քեզ հաճեալ էնն աստուած՝

10 Եկեալ ի քում բնակի.
Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս,
Մաքրական լորովայնի:

Աւետի՛ս քեզ, թագուհի՛,
Թագաւորին անմահի,

15 Յընծայ մեծաւ բերկրանօք՝
Այն, որ ի քէն ծնանի:
Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս,
Տիրէ երկնի և երկրի:

Խորագիր. Տաղ ծընընդեան փոկչին մերոյ տիրացու Սարգիս
ասացեալ

Ձեռագրում

1 սրբուի

3 հոբին

7 տիրուի

12 մաքրական

13 թագուի

15 բերկրանօք

18 տիրէյ

Աւետի՛ս քեզ, իսկուհի՛,
 20 Հարսն լերին Սիօնի,
 (3)արկ և տաճար և աթոռ,
 եւ տաղաւար սքանչելի.
 Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս,
 եւ ճեմարան Յիսուսի:

25 Աւետի՛ս, քեզ, ըղձալի՛,
 Մայրդ լերնոց բաղձալի,
 Աստուածայնոյ տուն
 եւ դիմարան գանձալի.
 Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս,
 30 եւ հրեշտակաց ցանկալի:

21 արկ, աթոռ

22 տաղայվար

27 դան վիս տուն

30 ցանկալի

ԺԵ

Այսօր ցնծասցուք բերկրանօք հաւատացեալք
Ընդ ծննդեամբ փրկչին մերոյ, ալէլուիա՛յ,
Գերակատար և զուարճառիթ ուրախութեան,
Եւ հրճուանօք, ալէլուիա՛յ, ալէլուիա՛յ:

- 5 Այսօր յայլին ընծայեցաւ դառն աստուծոյ,
Փրկչին մերոյս Իսրայէլի մեծ աւետիս,
Եւ յա(յ) տնեցաւ լրում ս(տ)ուերին ճշմարտապէս,
Նորոյս բսկիզբն, ալէլուիա՛յ, տէր, ողորմեա՛ւ:
- Այսօր ցնծան դասք հրեշտակաց ընդ մեր
բնութեամբ,

- 10 Մերոյ բնութեանս ի դժստոց, ալէլուիա՛յ,
Ի ձեռն մարմնացեալ բանի, որ ի կուսէ
Անճառելոյն, ալէլուիա՛յ, տէր մեզ մաքրեա՛ւ:

Այսօր անտանելին երկնից, որ իյերկիր
Խոնարհեցաւ ի մեր բնութիւնս, ալէլուիա՛յ,

- 15 Բազմեալ ի մասուր յանբանից, որ ի յայլին,
Ի բեթղէմ, ալէլուիա՛յ, տէր, մեզ քաւե՛ա:

Խորագիր. Տաղ ի վերայ ծննդեան Ակրնցի զուգէն Ապուղեղցի
տիրացու Սարքիսէ ասացեալ, որ է ալէլուայ

Ձեռագրում

- | | |
|----------------------------|------------------------------|
| 1 ցնծասցուք բերկրանօք | 7 յատնեցաւ, բոտերին ճշմարտայ |
| 2 Այստեղ և հետո՝ ալէլուիայ | պէս |
| 4 հրճուանօք | 8 օղորմեայ |
| 5 ընծայեցալ | 11 կոյսէ |
| 6 ալիսիս | 12 մաքրեայ |
| | 16 Բեթղէլէմ, քաւեալ |

Այսօր հովուացն անբան հօտին ձայն աւետեաց
 Մատուցանեն ի լսելիս, ալէլուիա՛յ,
 Դասք հրեշտակաց իջեալ յերկնից ուրախութեամբ,
 20 Զերգ օրհնութեան, ալէլուիա՛յ, տէր, մեզ սրբեա՛:

Այսօր հովուացն համահանգոյն երգակցելով
 Զփառս ի բարձունս ընդ հրեղինացն, ալէլուիա՛յ,
 Վեր առաքեմք պաղատանօք համեղ ձայնիւ,
 Մնիցելոյն, ալէլուիայ, տէր, զմեզ փրկեա՛:

25 Այսօր մոզոյ թաղաւորացն համաձայնեալ,
 Խունկս աղօթից առ բուրելով, ալէլուիայ,
 Զոսկիս, զզմուռս և զծիրանիս առատրեսցուք,
 Տեառն տէրանց, ալէլուիա՛յ, տէր, աղատեա՛:

Այսօր և մեք հաւատացեալքս երկրպագցուք
 30 Ընդ արքայիցն տրեւելան, ալէլուիա՛յ,
 Զօրհնեղութիւնս մատուցեալ փառատրութեամբ
 Մարմնացելոյն, ալէլուիա՛յ, տէր, ողորմեա՛:

17 հօտին, աւետեաց

20 սրբեայ

22 բարցունս

23 պաղատանօք

24 փրկեայ

25 թաղաւորացն

26 աղօթից

28 աղատեայ

29 հավատացքս երկրպագցուք

32 ողորմեայ:

ԺԳ

- Ի յայնմ աւուր հրապարակի
 յորժամ նստիս ի յատեան,
 Հանդերձ դասուք երկնաւորօք
 Ի յաթոռ դատողութեան,
 Ընդ քոց սրբոց առաքելոց
 Ընտրելոցն երկոտասան,
 Եւ անմարմնոց զինուորութեամբք
 Վայլեցելովք վառ ի վառ
- 5 Սարսափելի յայնմ մտտին
 յորժամ հնչի ձայն փողոյն,
 Զսյգ ընդ բանին արողապէս
 Հառնեն մեռեալքն ի հողոյն
 Գան փութապէս և ժողովին
 առաջի սուրբ աթոռոյն՝
 Առ ի լսել զերանաւէտ
 և սոսկալի զայն բարբառ:

Խորագիր. Ահա կրից հիքոյս աս տէրն իմ Յիսուս՝ Ակրնցի գիւղէն Ապոլօնիցի տիրացու Սարքիսէ ասացեալ (Այս խորագրին նախորդում է այսպիսի խորագիր. «Տաղ ի վերայ դարնան՝ Ադնեայ զողէն Ապոլօնիցի տիրացու Սարքիսէ ասացեալ վասն հիքոյն», ապա ջնջված են «տաղ ի վերայ դարնան» բառերը: Մնացածը, կարծում ենք, որ կարող է լինել այս տաղի խորագրի տարբերակ):

Ձեռագրում

- | | |
|-----------------------|---------------------|
| 1 Հատեան | 6 արայգայակս, հողոյ |
| 2 հանձերձ, երկնաւորօք | 7 փութապէս |
| 3 երկոտասան | 8 զերանաւէտ, բարբառ |

- Ահեղահրաշ յայնմիկ լրոյ
 9 Ենծալցեալք զատր արդարոց,
 10 Զի առաքին ի փառս անճառս
 նախապէս պատրաստելոց
 Եւ սասանի(ն) տորակուեալք
 Բազմութիւնք մեղուցելոց,
 Զի առաքին լի բարկութեամբ
 ի հոլքն անշէջ մշտալառ:
 Բուստ ի յերկնից որոտալով
 հանգերձ փառօք հալլական,
 Եւ բազմութեամբ լուսեղինաց
 ի ձորն իջեալ Գեթսեման,
 15 Եւ ճառագալթք սրբոյ խաչին,
 որք տռաջի ընթանան,
 Զոմանս ի կեանս հրաւիրեն
 և զոմանս ի մահ ի սղառ:
 Գիր ի վերոյ նստեալ աթոռ
 հալլական իշխանութեամբ,
 Առ ի զստեկ զազգս մարդկան
 անճառելի բնութեամբ,
 Հատուցանել չարեացն զչար
 ընարողական հատուցմամբ,
 20 Եւ որ բարիքն են՝ պարգեան
 զխոստացեալ փառս անճառ:

9 ահեղահրաշ, ցնծալցեալք, ար-
 թարոց

10 նախապէս

11 սասանի տորակուեալք

12 միշտալառ

13 յերկնից որոյտալով հանթերց
 փառօք

14 բազմութեանք լոյսերինար, ի-

շեալ Գեթսեման

15 տռաջի

16 հրալիրեն

18 զատկս մարիկան

19 հատուցմամբ

20 պարբեղէս

Սարսառելի չաշնմիկ վայրի,
 ուր ահագին բազմութիւնք,
 Յաջ և ի ձախ դիպակուտեալ
 ծովառարատ յորդութիւնք,
 Եւ ի միջի տարածեցեալ
 լուսափայլիցն յոքնութիւնք;
 (Ե՛ւ) սր ելել զօղիսն* չաշնեց
 սրբոց վերնոցն կռճառքի

25 Էականից լուսով շնորհաց
 լուսավորեա՞ւ՝ զեղկելիս,
 Լերժանացո՞ւ՝ օղեաց զասուն
 և մի զրկել զեղկելիս,
 Քանզի դին ևմ անապական
 մաքուր արեանդ եղկելիս,
 Վասն աչի զթա՞ւ, ո՞վ աէր, իմ աէր
 և մի՛ զտանր զեղկելիս**:

Է բարեխօս չաջմէ քումէ
 տիրամայրն ամէնօրհնեալ,

30 Մարբաղարդեալ հոգով սրբով
 առաջաւարն առտուածրեկալ,

22 Հաշ, դիպակուտեալ հորթու-
 թիւնք

23 միջի, լոյսաշփայլիցն

25 Էականից լոյսով, լուսա-
 վորեալ

26 արժանացոյ

27 անապական

28 զթալ

29 բարեխօս հաջմէլ

30 մարաշարթիւնալ հորթով, առ-
 տաւածրեկալ

* Այս բառի մոխարեն ձեռագրում «զուղիսն», ուղղում էնք ըստ
 իմաստի:

** Այս բառի մոխարեն, ըստ հանդավորման պահանջի, պետք է
 լինէր առ վերջավորութեամբ բառ:

Եւ ի ձախմէ մեծն ամլորդի

Մկրտիչն հոգով մաքրեալ

Են բարեխօս վասն իմ հիքոյս

անդադար և անսպառ:

ԺԷ

Եկա՛յք մանկունք նոր Սիօնիս, աւետի՛ս,
 Պարտկեցեցուք ի սուրբ տօնիս, աւետի՛ս,
 աւետի՛ս,
 Շրջաբերեալ օրհներդութեամբ, աւետի՛ս,
 Ճառել զանճառ խորհուրդ բանիս, աւետի՛ս,
 աւետի՛ս:

5 Դպիրք հանդերձ դպրասկեռօք, աւետի՛ս,
 Եւ քահանայք սարկաւազօք, աւետի՛ս, աւետի՛ս,
 Զտօն յարութեան փրկչին մերոյ, աւետի՛ս,
 Որհնեալ քաղցրանուագ երգօք, աւետի՛ս, աւետի՛ս:

Ըստ զուշակման սաղմոսերգուն, աւետի՛ս,
 10 Աստուածահայր մարգարէին, աւետի՛ս, աւետի՛ս,
 Յարեաւ աստուած և ցրուեցան, աւետի՛ս,
 Ասէ՛ բուն թշնամիք նորին, աւետի՛ս, աւետի՛ս:

Խորագիր. Տաղ ի վերայ սուրբ զատկին յարութեան ասացեալ,
 որ «Այս յարկ նսովիրանացին» տեղ աս կասեն, ի տիրացու Սար-
 րիսէ զարթարեալ. աւետիս ձայն է:

Ձեռագրում

1 Այստեղ և հետո՝ աւետիս	7 Հարութեան
5 հանթերց դրոշմակտօք	8 քաղցրաշնագ երկօք
6 սարկալագիօկ	10 աստուածայհայր մարգարէյին
	11 ցրվեցան

* Զույգ տողերում միշտ չէ, որ երկու անգամ է գրված «աւե-
 տիս»: Վերականգնում ենք, ելնելով բանաստեղծութեան տան կա-
 ստեղծութից:

15 Լցեալ արդէն կատարեցաւ, աւետի՛ս,
 Բան օրհնեբոլին և լրացաւ, աւետի՛ս, աւետի՛ս,
 Բրիստոս յարեաւ ի մեռելոց, աւետի՛ս,
 Եւ տրամուխիւնն մեր բարձաւ, աւետի՛ս, աւետի՛ս:

Արդ ցնծասցուք հաւատացեալք, աւետի՛ս,
 Եւ բերկրանօք լիցուք լըցեալք, աւետի՛ս, աւետի՛ս,
 Ընդ նորոգմամբ եկեղեցւոյ, աւետի՛ս,
 20 Հնայն ի նորս անդրափոխեալք, աւետի՛ս,
 աւետի՛ս:

Մեծ աւետիք են քեզ այսօր, աւետի՛ս,
 Ընդ յառնել փրկչին ամենազօր, աւետի՛ս,
 աւետի՛ս,

Զի խորտակեաց զնիզս դժոխոց, աւետի՛ս,
 Կտպեալ ի նմոյ զառիւծն հզօր, աւետի՛ս, աւետի՛ս:

25 Պաշտօտացիր եկեղեցի, աւետի՛ս,
 Հեթանոսաց համախմբի, աւետի՛ս, աւետի՛ս,
 Քանցի յարեաւ ի մեռելոց, աւետի՛ս,
 Փեսայդ անմահ և բղձալի, աւետի՛ս, աւետի՛ս:

Բերկրեալ ցնծա և զուարճացիր, աւետի՛ս,
 30 Հանդերձ որդովք զօրս երկնացն, աւետի՛ս,
 աւետի՛ս,

Յարութեամբ տեառն ամէնօրհնեալ, աւետի՛ս,
 Եւ մեծապէս անձանացիր, աւետի՛ս, աւետի՛ս:

13 կատարեցաւ

14 լրացաւ

15 հարեալ

16 բարցաւ

17 հաւատացեալք

21 ավետիք

22 ամենազօր

23 զնիզս

24 նմոյ զառիւծն

27 հարեաւ

29 ցնծալ

30 հանձնեց

32 մեծապէս անձանացիր (")

Այն, որ թաղեալն էր յուրբաթի, աւետի՛ւս,
Յարեաւ յետ աւու(ր)ց յերրորդի, աւետի՛ւս,
աւետի՛ւս,

35 Ի ձեռն հնոյ չար ժողովոյն, աւետի՛ւս,
Բանն հօր և անդրանիկն որդի, աւետի՛ւս, աւետի՛ւս:

Այսօր յարեալն ի մեռելոց, աւետի՛ւս,
Յարութեան յէն մահացելոց, աւետի՛ւս, աւետի՛ւս,
Եւ լերած(ն)եաց դամենեաին, աւետի՛ւս,
40 Ազատելով ի դժոխոց, աւետիւս, աւետի՛ւս:

Լուծեալ զկապանս նախաստեղծին, աւետի՛ւս,
Բանն հօր և որդին միածին, աւետի՛ւս, աւետի՛ւս,
Եւ ջախջախեաց մեծաւ սաստիւ, աւետի՛ւս,
Զզլուխ շար իշխանին մահածին, աւետի՛ւս,
աւետի՛ւս:

45 Յորում բռնեալն էր յանկմանէ, աւետի՛ւս,
Որ հաստեցան յիսկզբանէ, աւետի՛ւս, աւետի՛ւս,
Արդ տապալեալ զորջըս նորին, աւետի՛ւս,
Ըստ բոլորին ի հիմանէ, աւետի՛ւս, աւետի՛ւս:

Այսօր ստուերն ճշմարտեալ, աւետի՛ւս,
50 Եւ հին ի նորս անդրափոխեալ, աւետի՛ւս, աւետի՛ւս,
Նոր Իսրայէլ անուանեցաք, աւետի՛ւս,
Յարութեամբ տեսուն ամէնօրհնեալ, աւետի՛ւս,
աւետի՛ւս:

33 յուրբաթի

46 յիսկսրանիւ

38 Էն (") մահացելոց

49 ըստուերն

43 մեծով սաստիւ

Այսօր զատիկն մեր զինաւ, աւետի՛ւս,
 Առեալ մարմնովն իսկականաւ, աւետի՛ւս,
 55 Եւ յարուցեալն ի մեռելոց, աւետի՛ւս,
 Յայտնեալ կերպիւ բաղմականաւ, աւետի՛ւս,
 աւետի՛ւս:

Նախ Մարիամու Մագթաղէնին, աւետի՛ւս,
 Կերպարանաւ սարտիղսանին, աւետի՛ւս, աւետի՛ւս,
 Երկրորդաբար իւղաբերիցն, աւետի՛ւս,
 60 Այլով կերպիւ բոլորովին, աւետի՛ւս, աւետի՛ւս:

Երրորդաբար մեծի վիմին, աւետի՛ւս,
 Այնմ, որ գթեալն էր հանդիսին, աւետի՛ւս,
 աւետի՛ւս,
 Երեքաւ և հաստատեաց, աւետի՛ւս,
 Ճշմարտապէս զնա առանձին, աւետի՛ւս, աւետի՛ւս:

65 Ըստ բանի աւետարանչին, աւետի՛ւս,
 Այնմ, որ Ղուկասն յորջորջին, աւետի՛ւս, աւետի՛ւս,
 Յայտնեալ երկուց կղոստէեանց, աւետի՛ւս,
 Յեմ մանուսայ ճանապարհին, աւետի՛ւս, աւետի՛ւս:

Եւ այս աւուր երեկոյին, աւետի՛ւս,
 70 Աշակերտացն սուրբ իմբին, աւետի՛ւս, աւետի՛ւս,
 Մտեալ ընդ դրօքն փակեւօք, աւետի՛ւս,
 Ի վերնատունն յայտնեալ լ(ի)նին, աւետի՛ւս,
 աւետի՛ւս:

53 զինով

60 կերպիւ

54 իսկականով

63 Երկվեցով

55 հարուցեալն

65 ավետարանչին

56 յտանեալ կերպիւ բաղմայ-
 կանով

66 Ղուկազն

68 Յեմաշտայ ճանապարհին

58 կերպարանով

70 աշակերտացն

59 երկրորդաբար իւղաբերիցն

72 վերնատունն

ՓԸ

Առաջին օրինաց լըրումն յա(յ)տնեցար,
Բանիւ քան զամենայն գերազանցեցար,
Գերագոյն բնութեամբ հանգոյն հրեղինաց՝
Դասուց մարգարէից մեծ լոյս ծագեցար:

5 Եւ նորոյս իսկապէս արեւիք ցուցար,
Զանազան երանգօք գեղափայլեցար,
Էականի լուսոյն զոլ յառաջ ընթացար,
Հսկիւզբն առաքելոց նախաձայնեցար:

Թաքուցելոյն գանձի բացմամբ բերկրեցար,
10 Ժողովոյն տգիտաց քարոզ կարգեցար,
Ի լոյս հօրէն զորդի ընկալմամբ՝
Լուսալիր սուրբ հոգուն տեսլեամբ հաղեցար:

Խորագիր. Առ սուրբն Յովանէս Մկրտիչն բան ի նորոյ, որ է գովասանութիւն, տիրացու Սարգիսէ առաջեալ

Ձեռագրում

1 յատնեցար	8 նախաձայնեցար
3 գերայգոյն	9 թաքուցելոյն
4 մարգարէից	10 ժողովոյն, կարկեցար
5 իսկապէս արեւիք	11 հօրէն զորթին ընկալմամբ
6 գեղափայլեցար	12 լոյսալիր, հոգուն, հարրեցար
7 լոյսուն, հառաջ	

15 Խորոցն աստուածայնոց խորհրդակցեցար,
 Մածկելոյ հոր բանին ձայն պատրաստեցար,
 Կամաւ հօր եկելոյն ի Յորդանան գետ՝
 Հոգոյն սրբոյ ազդմամբ Մկրտիչ ցուցար:

20 Ձայն բարբառոյ յանապատէ աղբեցար,
 Ղամբարօրէն վառմամբ լուսափայլեցար,
 Ճշմարիտ միածին կարապետելով՝
 Մկրտելովդ զնա հոգով մաքրեցար:

3 Յուէտահրաշ լոյսով լցեալ լրացար,
 Դման այն Զոհալին լուսափայլեցար,
 Շնորհաց արեգական լոյսովն անմատոյց՝
 Ողորմելի հոգոց ճառագայթեցար:

25 Չարին Հերովդէի բանախին մատնեցար,
 Պահապանացն յանձնեալ ի կոճղ պընդեցար,
 Զահգ լուսապայծառ խաւարեալ հոգոց՝
 Ռահին ռամկականաց արդ նսեմացար:

30 Սիրով Խիրահարին սրրահարեցար,
 Վտան այն լկտի բորբին և զլխատեցար,
 Տեառն Յիսուսի անբիծ տատրակդ անարատ՝
 Բամակերտին ազդու փողըդ լռեցար:

13 խորհրդակցեցար

14 հոր

15 կամով, Հորթանան

16 հորոյն

17 բարբառոյ

18 լոյսափայլեցար

20 զնայ հորով

21 յաւետացհրաշ

22 անյն Զոյալին լոյսափայլեցար

23 արեկագան, անմատոյց

24 հորոց ճառակայթեցար

25 Հերովդէի բանդին

26 հանձնեալ

27 լոյսապայծառ խաւարեալ հո-
րոց

28 նսեմացար

Յանկալի ճգնութիւն վարուք բարձրացար,
 Իւծեալ հիւանդ բնութեանս բժիշկ կացուցար,
 35 Փառ(օ)ք թագաւորին ձախմէ նստելով՝
 Քաւութեան վասն մեր բարեխօս ցուցար:

Սուրբ Յովհ/ան/ն/էս յորովայնէ ընտրեցար,
 Շնորհիւ սրբոյ հոգոյն լուսազարդեցար,
 Ի ծնունդս կանանց տէրամբ կոչեցար,
 40 Ի Մըկըրտիչ աստուածորդոյն կոչեցար:

33 ցանկալի, բարբրացար

36 բաժովեան, բարէյխոս

34 հիւանդ, բժիժիկ

37 Յովանէս

35 փառք թագաւորին ձախմէյ

38 շնորհիւ, հորոյն լուսազարկե-
 ցար



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երկու խոսք	5
Սարգիս Ապուլեխյան և իր տաղերը	7

ԲՆԱԳՐԵՐ

Բնագրերի հրատարակության մասին	45
Ա. Ի բոլոր կեանս իմ բաց ի քէն	49
Բ. Գեղեցկափայլ է նազելի	52
Գ. Այն նազելի սէր իմ, ոհ,	55
Դ. Ուխտք իմ լիցի ոչ զոք սիրել	57
Ե. Հրով սիրոյդ, ով իմ ազնիւ	59
Զ. Ահա է հաս ազնիւ գարուն	62
Է. Հարաւային հողմունքն հնչեն	64
Ը. Գարնան օրերն եկեալ հասին	66
Թ. Ծաղկանց գլխոյ և թաղուհի	68
Ժ. Նախաժաման ծառ պտղաբեր	70
ԺԱ. Ով սրբունի, մայր մաղթանաց	72
ԺԲ. Լցեալ եմ վիրօք ցաւալի, ցաւալի	74
ԺԳ. Այսօր արեն այն ըզգալի	76
ԺԴ. Աւետիս քեզ, սրբունի	78
ԺԵ. Այսօր ցնծասցոյք բերկրանօք հաւատացեալք	80
ԺԶ. Ի յայնմ աւուր հրապարակի	82
ԺԷ. Եկալք մանկունք նոր Սիօնիս	86
ԺԸ. Առաջին օրինաց լըրումն յայտնեցար	90

ՄԱՆԻԿ ՍԻՄՈՆԻ ՄԿՐՏՁՅԱՆ

МАНИК СИМОНОВНА МКРТЧЯН

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒԶԵՆՅԻ

Պատ. խմբագիր Ա. Ա. ՂԱԶԻՆՅԱՆ
 Հրատ. խմբագիր Է. Ս. ԱՎԵՏՅԱՆ
 Նկարչ. ձևավորումը Հ. Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
 Տեխ. խմբագիր Ս. Կ. ԶԱԲԱՐՅԱՆ
 Սրբագրիչ Թ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վճ. 03498 Պատվեր 13 Տպաքանակ 4000
 ԽՃՀ 1325, հրատ. 3475: Հանձնված է արտադրության 11/1 1971 թ.,
 ստորագրված է տպագրության 16/IV 1971 թ., տպագր. 5,75 մամուլ,
 հրատ. 2,72 մամուլ, պաշմ. 4,83 մամուլ, թուղթ № 1, 84 × 1081/49:

Գինը 34 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
 Երևան, Բարեկամության 24:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220046522

Գ ի ն ը 34 կ.

A II
46522